

ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԱՐՓԱԿ ԱՐԳԵԼՄԱՆ  
ԴԱՅԱՎԱՐԱԳԻՐ  
(1-ին մաս)

Նախարան

Սույն Պայմանագրի Մասնակից պետությունները (այսուհետ՝ Մասնակից պետություններ),

ողջունելով միջազգային համաձայնագրերը եւ վերջին տարիների դրական այլ միջոցառումները միջուկային գինաթափման քնագավառում, ներառյալ միջուկային գեների գինապահեստների կրծատումները, ինչպես նաև՝ միջուկային տարածման կանխարգելման ոլորտում դրա բոլոր դրսեւորումներում,

ընդգծելով այդպիսի պայմանագրերի եւ միջոցառումների լիակատար եւ արագ իրագործման կարեւորությունը,

համոզված լինելով, որ ներկայիս միջազգային իրավիճակը հնարավորություն է ընձեռում ձեռնարկելու հետագա արդյունավետ միջոցներ միջուկային գինաթափման ուղղությամբ եւ միջուկային գեների տարածման դեմ՝ դրա բոլոր դրսեւորումներով, եւ հայտարարելով այդպիսի միջոցներ ձեռնարկելու իրենց մտադրության մասին,

շեշտելով, հետեւաբար, միջուկային գեների գլոբալ կրծատման ուղղությամբ համակարգված եւ առաջադեմ շարունակական շանքերի անհրաժեշտությունը՝ վերջնական նպատակ ունենալով ոչնչացնել այդ գեները եւ հասնել ընդհանուր ու լիակատար գինաթափման խիստ եւ արդյունավետ միջազգային հսկողության ներքո,

ընդունելով, որ միջուկային գեների զարգացման եւ որակական բարելավման սահմանափակման եւ միջուկային գեների կատարելագործված նոր տեսակների զարգացման դադարեցման միջոցով միջուկային գեների բոլոր փորձարկումային պայթյունների եւ մյուս բոլոր միջուկային պայթյունների դադարեցումն իրենից ներկայացնում է միջուկային գինաթափման եւ իր բոլոր դրսեւորումներով չտարածման արդյունավետ միջոց,

ընդունելով նաեւ, որ բոլոր այդպիսի միջուկային պայթյունների դադարեցումը, այսպիսով, կհանդիսանա միջուկային գինաթափման հասնելու համակարգված գործընթացի իրականացման եական քայլ,

համոզված լինելով, որ միջուկային փորձարկումների դադարեցման հասնելու ամենաարդյունավետ ուղին համընդհանուր եւ միջազգային ու արդյունավետորեն վերահսկելի միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կնքումն

է, որը վաղուց եղել է միջազգային հանրության ամենաբարձր առաջնայնություն ունեցող նպատակներից մեկը գինաթափման եւ չտարածման ոլորտում,

Նշելով, որ՝ Մթնոլորտում, բաց տիեզերքում եւ ստորջրյա միջուկային գեների փորձարկումների արգելման 1963 թվականի Պայմանագրի Մասնակից պետությունների կողմից արտահայտված ձգտումներն ուղղված են միջուկային գեների բոլոր փորձարկումային պայթյունների մեկնարկիչտ դադարեցմանը հասնելուն,

Նշելով նաեւ արտահայտված այն տեսակետները, որ սույն Պայմանագրի կարող է նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը,

հաստատելով բոլոր պետություններին սույն Պայմանագրին միանալու ուղղությամբ խրախուսելու նպատակը, եւ դրա խնդիրը՝ արդյունավետորեն նպաստել միջուկային գեների տարածման կանխարգելմանը՝ իր բոլոր դրսեւորումներով, միջուկային գինաթափման գործընթացին եւ, դրանով իսկ, միջազգային խաղաղության ու անվտանգության ամրապնդմանը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պարտավորվում է չիրականացնել միջուկային գենքի որեւէ փորձարկումային պայթյուն կամ ցանկացած այլ միջուկային պայթյուն եւ արգելել ու կանխարգելել ցանկացած այդպիսի միջուկային պայթյուն իր իրավասության կամ հսկողության տակ գտնվող ցանկացած վայրում:

2. Ավելին, յուրաքանչյուր Մասնակից պետություն պարտավորվում է ձեռնպահ մնալ միջուկային գենքի որեւէ փորձարկումային պայթյունի կամ այլ բնույթի միջուկային պայթյունի իրականացում պատճառելուց, խրախուսելուց կամ դրան ցանկացած ձեռվ մասնակցելուց:

## ՀՐԴՎԱԾ II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Ընդհանուր դրույթներ

1. Մասնակից պետությունները սրանով հիմնում են Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպություն (այսուհետ՝ 'Կազմակերպություն')՝ սույն Պայմանագրի առարկային եւ նպատակին հասնելու, դրա դրույթների իրականացումն ապահովելու համար, ներառյալ՝ դրան համապատասխանության

միջազգային վերահսկողության դրույթները, եւ Մասնակից պետությունների միջեւ խորհրդակցության եւ համագործակցության համար ֆորում ապահովելու համար:

2. Բոլոր Մասնակից պետությունները պետք է լինեն Կազմակերպության անդամներ: Որեւէ Մասնակից պետություն չի գրկվում Կազմակերպությանը իր անդամակցությունից:

3. Կազմակերպության նստավայրը կիևսի Վիեննան. Ավստրիայի Յանրապետություն:

4. Որպես Կազմակերպության մարմիններ՝ այսպիսով հիմնադրվում են Մասնակից պետությունների խորհրդաժողովը, Գործադիր խորհուրդը եւ Տեխնիկական քարտուղարությունը, որը ներառում է Տվյալների միջազգային կենտրոնը:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն սույն Պայմանագրի համաձայն իր գործառույթներն իրականացնելիս համագործակցում է Կազմակերպության հետ:

Մասնակից

պետությունները խորհրդակցում են միմյանց հետ ուղղակիորեն կամ Կազմակերպության կամ այլ համապատասխան միջազգային ընթացակարգերի, ներառյալ ՄԱԿ-ի շրջանակներում

գործող ընթացակարգերը, միջոցով եւ համաձայն ՄԱԿ-ի Կանոնակարգի՝ սույն Պայմանագրի առարկայի եւ նպատակի կամ դրույթների իրականացման առնչությամբ ծագած

ցանկացած հարցի շուրջ:

6. Կազմակերպությունն իրականացնում է սույն Պայմանագրով նախատեսված իր վերահսկող գործունեությունը՝ հետապնդինս չազդելով դրա նպատակների ժամանակին եւ արդյունավետ իրականացման վրա: Նա պահանջում է միայն այսպիսի տեղեկատվություն եւ տվյալներ, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարման համար: Կազմակերպությունը ձեռնարկում է բոլոր նախազգուշական միջոցները սույն Պայմանագրի կատարման ընթացքում քաղաքացիական եւ ռազմական գործունեության ու սարքավորումների մասին իրեն հայտնի ուղարձած տեղեկատվության գաղտնիությունը պահելու համար եւ, մասնավորապես, հետեւում է սույն Պայմանագրում շարադրված գաղտնիության մասին դրույթներին:

7. Յուրաքանչյուր Մասնակից պետություն որպես գաղտնի տեղեկատվության է վերաբերում սույն Պայմանագրի իրականացման կապակցությամբ Կազմակերպության ստացած տեղեկատվությանն ու տվյալներին եւ սահմանում է դրանց տնօրինման հատուկ կարգ: Մասնակից պետությունն օգտագործում է նման տեղեկատվությունն ու տվյալները բացառապես սույն Պայմանագրից բխող իր իրավունքների եւ պարտավորությունների հետ կապված:

8. Կազմակերպությունը, որպես անկախ մարմին, ծգտում է, համապատասխան դեպքերում, օգտագործել գոյություն ունեցող փորձագիտությունն ու սարքավորումները եւ հասնել ծախսերի առավելագույն արդյունավետության այլ

միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով, ինչպիսին է Աստոմային Եներգիայի միջազգային գործակալությունը: Նման պայմանավորվածությունները, բացառությամբ աննշան եւ սովորական առեւտրային ու պայմանագրային բնույթ ունեցողների, ընդգրկվում են այն համաձայնագրերում, որոնք պետք է ներկայացվեն Մասնակից պետությունների խորհրդաժողովի հաստատմանը:

9. Կազմակերպության գործունեության ծախսերը հոգում են Մասնակից պետությունները՝ տարեկան հիմունքներով՝ Միավորված ազգերի կազմակերպության վճարումների սանդղակին համապատասխան, որը ճշգրտված է՝ հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպությանը եւ Կազմակերպության անդամակցելու տարբերությունները:

10. Մասնակից պետությունների ֆինանսական անդամավճարները Նախապատրաստական հանձնաժողովին համապատասխան ձեռով կրճատվում են կանոնավոր բյուջեում կատարված նրանց անդամավճարներից:

11. Մասնակից պետությունը, որը չի իրականացնում սահմանված անդամավճարի վճարումը Կազմակերպությանը, չի ունենում ձայնի իրավունք Կազմակերպությունում, եթե պարտք գումարը կազմում կամ գերազանցում է նախորդ երկու լրիվ տարիների համար նախատեսված վճարումների գումարը: Այսուամենայնիվ, Մասնակից պետությունների խորհրդաժողովը կարող է այդ անդամին թույլատրել քվեարկել, եթե համոզվի, որ վճարումը չի կատարվել տվյալ անդամից անկախ պատճառներով:

#### Բ. Մասնակից պետությունների խորհրդաժողովը

Կազմը, ընթացակարգերը եւ որոշումների ընդունումը

12. Մասնակից պետությունների խորհրդաժողովը (այսուհետ՝ խորհրդաժողով) կազմվում է բոլոր Մասնակից պետություններից: Յուրաքանչյուր Մասնակից պետություն խորհրդաժողովում ունենում է մեկ ներկայացուցիչ, որին կարող են ուղեկցել փոխարինողները եւ խորհրդականները:

13. Խորհրդաժողովի առաջին նստաշրջանը հրավիրվում է ավանդապահի կողմից՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

14. Խորհրդաժողովը հրավիրվում է հերթական նստաշրջաններին, որոնք անցկացվում են ամեն տարի, եթե խորհրդաժողովը չի ընդունում այլ որոշում:

15. Խորհրդաժողովի հատուկ նստաշրջան գումարվում է.

ա) Խորհրդաժողովի որոշմամբ,

բ) Գործադիր խորհրդի հայցով, կամ

գ) որեւէ Մասնակից պետության հայցով, եթե այն աշակցություն է ստանում

Մասնակից պետությունների մեծամասնության կողմից:

Յատուկ նստաշրջանը գումարվում է Խորհրդաժողովի որոշումից, Գործադիր խորհրդի հայցից կամ անհրաժեշտ աշակցություն ստանալուց ոչ ուշ, քան 30 օր հետո, եթե որոշման մեջ կամ հայցում այլ բան նշված չէ:

16. Խորհրդաժողովը կարող է գումարվել նաեւ ՈՒղղումների խորհրդաժողովի ձեռով՝ համաձայն 7-րդ հոդվածի:

17. Խորհրդաժողովը կարող է գումարվել նաեւ Վերանայման խորհրդաժողովի ձեռով՝ համաձայն 8-րդ հոդվածի:

18. Նստաշրջաններն անցկացվում են Կազմակերպության նստավայրում, եթե Խորհրդաժողովը այլ որոշում չի ընդունում:

19. Խորհրդաժողովն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Յուրաքանչյուր նստաշրջանի սկզբում Խորհրդաժողովն ըստրում է իր նախագահին եւ այլ անհրաժեշտ պաշտոնատար անձանց: Նրանք պաշտոնավարում են մինչեւ հաջորդ նստաշրջանում նոր նախագահի եւ մյուս պաշտոնատար անձանց ըստրությունները:

20. Մասնակից պետությունների մեծամասնությունը կազմում է քվորում:

21. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ունի մեկ ծայնի իրավունք:

22. Խորհրդաժողովն ընթացակարգային հարցերին վերաբերող որոշումներն ընդունում է քվեարկությանը մասնակցող եւ քվեարկող անդամների մեծամասնությամբ: Եական հարցերին վերաբերող որոշումները, ինարավորության դեպքում, ընդունվում են կոնսենսուսով: Եթե չի հաջողվում կոնսենսուսի հասնել բարձրացված հարցի շուրջ որոշում ընդունելու ժամանակ, խորհրդաժողովի Նախագահը ցանկացած քվեարկություն հետաձգում է 24 ժամով, այդ հետաձգված ժամանակամիջոցում գործադրում է ամեն շանը կոնսենսուսի հասնելուն աջակցելու ուղղությամբ եւ մինչեւ այդ ժամանակի ավարտը հաշվետվություն է ներկայացնում խորհրդաժողովին: Եթե 24 ժամից հետո չի հաջողվում հասնել կոնսենսուսի, խորհրդաժողովը որոշումն ընդունում է քվեարկությանը ներկա եւ քվեարկող անդամների երկու երրորդ մեծամասնությամբ, եթե սույն Պայմանագրում այլ բան նշված չէ: Եթե վեճ է ծագում այն բանի վերաբերյալ, թե արդյոք այս կամ այն հարցը եական է, թե ոչ, ապա տվյալ հարցը դիտվում է որպես եական հարց, եթե չի ընդունվում այլ որոշում հարցի եական լինելու վերաբերյալ որոշում ընդունելու համար պահանջվող մեծամասնությամբ:

23. 26-րդ կետի "Ժամ" ենթակետով Նախատեսված իր գործառույթը կատարելու ընթացքում խորհրդաժողովն ընդունում է որոշում սույն Պայմանագրի 1-ին Հավելվածում նշված պետությունների ցուցակում ցանկացած պետություն ավելացնելու մասին՝ 22-րդ կետում նշված եական հարցի շուրջ որոշումների ընդունման ընթացակարգի համաձայն: Չնայած 22-րդ կետին՝ խորհրդաժողովում սույն Պայմանագրի 1-ին Հավելվածում ցանկացած այլ փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշումներն ընդունում են կոնսենսուսով:

#### Լիազորություններ եւ գործառույթներ

24. Խորհրդաժողովը Կազմակերպության գլխավոր մարմինն է: Նա ընսարկում է սույն Պայմանագրի գործողության շրջանակներում ցանկացած հարց, թեմա եւ խնդիր, ներառյալ այն հարցերը, որոնք վերաբերում են Գործադիր խորհրդի եւ Տեխնիկական քարտուղարության լիազորություններին եւ գործառույթներին, սույն Պայմանագրի համաձայն: Նա կարող է ներկայացնել առաջարկություններ եւ ընդունել որոշումներ սույն Պայմանագրի գործողության շրջանակներում ցանկացած հարցի, թեմայի եւ խնդրի վերաբերյալ, որոնք բարձրացվում են որեւէ Մասնակից պետության կողմից կամ ներկայացվում են խորհրդաժողովի ուշադրությանը Գործադիր խորհրդի կողմից:

25. Խորհրդաժողովը պետք է վերահսկի սույն Պայմանագրի հրագործումը եւ հետեւի դրան համապատասխանությանը եւ միջոցներ ծեռարկի նրա առարկային եւ նպատակին աջակցելու համար: Նա պետք է հետեւի նաեւ Գործադիր խորհրդի եւ Տեխնիկական քարտուղարության գործունեությանը եւ նրանցից յուրաքանչյուրի համար սահմանի գործառույթների իրականացման դեկավար սկզբունքներ:

#### 26. Խորհրդաժողովը պետք է.

ա) ընսարկի եւ ընդունի Կազմակերպության հաշվետվությունը սույն Պայմանագրի իրագործման մասին եւ Գործադիր խորհրդի կողմից ներկայացված՝ Կազմակերպության տարեկան ծրագիրը եւ բյուջեն, հնչածն նաեւ՝ այլ հաշվետվություններ,

բ) ընդունի որոշումներ Մասնակից պետությունների ֆինանսական անդամավճարների սանդղակի վերաբերյալ՝ 9-րդ կետի համաձայն,

գ) ընտրի Գործադիր խորհրդի անդամներին,

դ) նշանակի Տեխնիկական քարտուղարության Գլխավոր տնօրենին (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն),

ե) ընսարկի եւ հաստատի Գործադիր խորհրդի ընթացակարգային կանոնները, որոնք ներկայացվել են վերջինիս կողմից,

գ) ընսարկի եւ վերանայի այն գիտական եւ տեխնոլոգիական գարգացումները, որոնք կարող են ազդել սույն Պայմանագրի գործունեության վրա: Այդ համատեքստում խորհրդաժողովը կարող է հանձնարարել Գլխավոր տնօրենին ստեղծել Գիտախորհրդատվական մարմին, որը խորհրդաժողովին, Գործադիր խորհրդին կամ Մասնակից պետություններին թույլ կտա իրենց գործառույթներն իրականացնելիս գիտության եւ տեխնիկայի՝ սույն Պայմանագրին առնչվող ոլորտների վերաբերյալ տրամադրել մասնագիտական խորհրդատվություն. այդ դեպքում Գիտախորհրդատվական

մարմինը կազմված կլինի անկախ փորձագետներից, որոնք կաշխատեն ինքնուրույն եւ նշանակված կլինին Խորհրդաժողովի կողմից ընդունված պայմանների համաձայն՝ սույն Պայմանագրի իրագործմանն առնչվող կոնքներ գիտական ոլորտներում իրենց փորձի եւ իրավասության հիման վրա,

Ե) ճեղնարկի անհրաժեշտ միջոցներ սույն Պայմանագրին համապատասխանությունն ապահովելու եւ սույն Պայմանագրի դրույթները խախտող ցանկացած իրավիճակ պարզեցնելու

Ե) ուղղելու համար՝ համաձայն 5-րդ հոդվածի,

Ը) իր առաջին նստաշրջանին ընսարկի եւ հավանություն տա բոլոր համաձայնագրերի և այսագծերին, պայմանավորվածություններին, դրույթներին, ընթացակարգերին, Գործարկման ճեղնարկներին, ուղեցույցներին եւ բոլոր այլ փաստաթղթերին, որոնք մշակվել եւ առաջարկվել են Նախապատրաստական հանձնաժողովի

կողմից,

Թ) ընսարկի եւ հավանություն տա Տեխնիկական քարտուղարության կողմից Մասնակից պետությունների, այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների հետ բանակցությունների միջոցով մշակված համաձայնագրերին եւ պայմանավորվածություններին, որոնք, համաձայն 38.ը կետի, ենթակա են Կազմակերպության անունից Գործադիր խորհրդի կողմից կը ընթացական,

Ժ) հիմնարդի այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք համարում ե անհրաժեշտ իր գործառությների իրականացման համար, համաձայն սույն Պայմանագրի, եւ

Ժա) ըստ նպատակահարմարության՝ նորացնի սույն Պայմանագրի 1-ին Հավելվածը՝ 23-րդ կետի համաձայն:

#### Գ. Գործադիր խորհուրդ

Կազմ, ընթացակարգեր եւ որոշումների ընդունում

27. Գործադիր խորհուրդը պետք է բաղկացած լինի 51 անդամից: Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է իրավունք ունենա, համաձայն սույն հոդվածի դրույթների, լինելու Գործադիր խորհրդի անդամ:

28. Հաշվի առնելով աշխարհագրական հավասարաչափ բաշխման անհրաժեշտությունը՝ Գործադիր խորհուրդը պետք է բաղկացած լինի.

ա) 10 Մասնակից պետություն՝ Աֆրիկայից,

բ) 7 Մասնակից պետություն՝ Վրեւելյան Եվրոպայից,

գ) 10 Մասնակից պետություն՝ Լատինական Ամերիկայից եւ Կարիբյան ավազանից,

դ) 7 Մասնակից պետություն՝ Սերծավոր Վրեւելքից եւ Հարավային Ասիայից,

ե) 10 Մասնակից պետություն՝ Հյուսիսային Ամերիկայից եւ Վրեւմտյան Եվրոպայից,

զ) 8 Մասնակից պետություն՝ Հարավարեւեյան Ասիայից, Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից եւ Հեռավոր Արեւելքից:

Վերոնշյալ աշխարհագրական տարածաշրջաններից յուրաքանչյուրում գտնվող բոլոր պետությունները թվարկված են սույն Պայմանագրի 1-ին Հավելվածում: Սույն Պայմանագրի 1-ին Հավելվածը նպատակահարմարության դեպքում նորացվում է Խորհրդաժողովի կողմից՝ 23-րդ կետի եւ 26-րդ կետի "Ժա" ենթակետի համաձայն: Այն ենթակա չէ ուղղումների կամ փոփոխությունների՝ 7-րդ հոդվածի ընթացակարգի համաձայն:

29. Գործադիր խորհրդի անդամներն ընտրվում են Խորհրդաժողովի կողմից: Այս կապակցությամբ յուրաքանչյուր աշխարհագրական տարածաշրջան Գործադիր խորհրդի անդամության կազմում ընտրվելու համար ներկայացնում է Մասնակից պետություններ տվյալ տարածաշրջանից՝ հետեւյալ կարգով.

ա) յուրաքանչյուր աշխարհագրական տարածաշրջանին հատկացված տեղերի առնվազն

մեկ երրորդը լրացվում է, հաշվի առնելով քաղաքական եւ անվտանգության շահերը, այդ տարածաշրջանի Մասնակից պետությունների կողմից, որոնք նշանակվում են

Պայմանագրին առնչվող նշանակալից միջուկային ներուժի հիման վրա, որը սահմանվում է միջազգային տվյալների, ինչպես նաև հետեւյալ վկայակոչող չափանիշներից բոլորի կամ որեւէ մեկի հիման վրա՝ յուրաքանչյուր տարածաշրջանի կողմից սահմանված առաջնայնության կարգով.

(I) Դիտարկման միջազգային համակարգում դիտարկող սարքավորումների քանակը,

(II) դիտարկող տեխնոլոգիայի ընագավառում փորձագիտությունն ու փորձը, եւ

(III) Կազմակերպության տարեկան բյուջեին կատարվող վճարումները,

բ) յուրաքանչյուր աշխարհագրական տարածաշրջանին հատկացված տեղերից մեկը լրացվում է Մասնակից պետության կողմից՝ ռոտացիոն սկզբունքով, անգերենի այբբենական կարգով, տվյալ տարածաշրջանի այն Մասնակից պետությունների թվից, որոնք Մասնակից պետությունն դառնալուց ի վեր կամ իրենց լիազորությունների վերջին ժամկետից ի վեր՝ կախված այն բանից, թե որն է ավելի կարճ, ամենաերկար ժամանակահատվածում չեն եղել Գործադիր խորհրդի անդամ: Նման հիմունքներով նշանակված Մասնակից պետությունը կարող է որոշել հրաժարվել իր տեղից: Այդ դեպքում Մասնակից պետությունը Գլխավոր տնօրինին ներկայացնում է հրաժարման մասին գրություն, եւ նրա տեղն զբաղեցնում է սույն ենթակետում նշված հերթականությամբ հաջորդ Մասնակից պետությունը,

գ) յուրաքանչյուր աշխարհագրական տարածաշրջանին հատկացված մյուս տեղերը ռոտացիայի կամ ընտրությունների միջոցով լրացվում են այն Մասնակից պետությունների կողմից, որոնք տվյալ տարածաշրջանը ներկայացնող Մասնակից պետություններ են:

30. Գործադիր խորհրդի յուրաքանչյուր անդամ Գործադիր խորհրդում ունենում է մեկ ներկայացնուցիչ, որին կարող են ուղեկցել փոխարինողները եւ խորհրդականները:

31. Գործադիր խորհրդի յուրաքանչյուր անդամ պաշտոնավարում է իրեն ընտրող խորհրդաժողովի նստաշրջանի ավարտից մինչեւ հաջորդ երկրորդ հերթական տարեկան խորհրդաժողովի նստաշրջանի ավարտը՝ բացառությամբ Գործադիր խորհրդի առաջին ընտրությունների, երբ ընտրված 26 անդամները պաշտոնավարում են մինչեւ խորհրդաժողովի հերթական երրորդ տարեկան նստաշրջանի ավարտը. ընդ որում՝ հիմնական ուշադրությունը դարձվում է 28-րդ կետում սահմանված քանակական հարաբերակցությամբ:

32. Գործադիր խորհրդը մշակում է իր ընթացակարգային կանոնակարգը եւ ներկայացնում է խորհրդաժողովի հաստատմանը:

33. Գործադիր խորհրդն իր անդամներից ընտրում է իր Նախագահին:

34. Գործադիր խորհրդը գումարվում է հերթական նստաշրջանների համար: Հերթական նստաշրջանների միջեւ ընկած ժամանակամիջոցներում գումարվում է այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է իր լիազորությունների եւ գործառույթների կատարման համար:

35. Գործադիր խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

36. Գործադիր խորհրդն ընդունում է ընթացակարգային հարցերով որոշումներ իր բոլոր անդամների ձայնների մեծամասնությամբ: Գործադիր խորհրդն եական հարցերով որոշումներ է ընդունում բոլոր անդամների ձայնների երկու երրորդի մեծամասնությամբ, եթե սույն Պայմանագրում այլ բան նախատեսված չէ: Եթե հարց է ծագում, թե արդյոք այս կամ այն հարցը եական է թե ոչ, այդ հարցը դիտվում է որպես եական հարց, եթե եական հարցի շուրջ որոշում ընդունելու համար անհրաժեշտ մեծամասնությամբ չի ընդունվում որեւէ այլ որոշում:

Լիազորություններ եւ գործառույթներ

37. Գործադիր խորհրդը Կազմակերպության գործադիր մարմինն է: Նա հաշվետու է խորհրդաժողովին: Նա իրականացնում է սույն Պայմանագրի համաձայն իրեն վստահված լիազորություններն ու գործառույթները: Այս ընթացքում նա գործում է խորհրդաժողովի առաջարկությունների, որոշումների եւ դեկավար սկզբունքների համաձայն եւ ապահովում է դրանց շարունակական եւ պատշաճ կատարումը:

38. Գործադիր խորհրդը պետք է.

- ա) Նպաստի Պայմանագրի արդյունավետ իրագործմանը եւ դրան համապատասխանության ապահովմանը,
- բ) Վերահսկի Տեխնիկական քարտուղարության գործունեությունը,
- գ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնի Խորհրդաժողովին՝ սույն Պայմանագրի առարկայի եւ նպատակի իրականացման աջակցելու համար,
- դ) համագործակցի յուրաքանչյուր Մասնակից պետության Ազգային իշխանության հետ,
- ե) քննարկի եւ Խորհրդաժողովին ներկայացնի Կազմակերպության տարեկան ծրագրի ու բյուջեի նախագիծը, սույն Պայմանագրի իրագործման մասին Կազմակերպության հաշվետվության նախագիծը, իր սեփական գործունեության մասին հաշվետվությունը եւ այնպիսի այլ հաշվետվություններ, որոնք անհրաժեշտ ե համարում, կամ որոնք պահանջում ե Խորհրդաժողովը,
- զ) Կազմակերպի Խորհրդաժողովի նստաշրջանները, ներառյալ օրակարգի հարցերի նախագծերի նախապատրաստումը,
- ե) ուսումնասիրի Արձանագրությունում եւ Հավելվածներում վարչական եւ տեխնիկական բնույթի փոփոխություններ կատարելու առաջարկները՝ համաձայն 7-րդ հոդվածի, եւ առաջարկներ ներկայացնի Մասնակից պետություններին դրանց ընդունման վերաբերյալ,
- ը) Կազմակերպության անունից կնքի Խորհրդաժողովի նախնական հավանության արժանացած համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ Մասնակից պետությունների, այլ պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ, Վերահսկի դրանց իրագործումը՝ բացառությամբ "թ" Ենթակետում նշված համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների,
- թ) հաստատի եւ վերահսկի վերահսկողական գործունեության իրականացմանը Վերաբերող համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ Մասնակից պետությունների եւ այլ պետությունների հետ, եւ
- ժ) հաստատի ցանկացած նոր Գործարկման ձեռնարկ եւ ցանկացած փոփոխություն գոյություն ունեցող Գործարկման ձեռնարկներում, որոնք կարող են առաջարկվել Տեխնիկական քարտուղարության կողմից:
39. Գործադիր խորհուրդը կարող է պահանջել Խորհրդաժողովի հատուկ նստաշրջանի անցկացում:
40. Գործադիր խորհուրդը պետք է.
- ա) Նպաստի սույն Պայմանագրի իրագործման առևշտող համագործակցությանը Մասնակից պետությունների միջեւ, ինչպես նաև Մասնակից պետությունների եւ Տեխնիկական քարտուղարության միջեւ՝ տեղեկատվության փոխանակման միջոցով,
- բ) աջակցի Մասնակից պետությունների միջեւ խորհրդակցություններին ու պարզաբանումներին՝ 4-րդ հոդվածի համաձայն, եւ
- գ) ստանա եւ քննարկի 4-րդ հոդվածի համաձայն տեղում տեսչական ստուգումներ անցկացնելու վերաբերյալ հայցերը եւ միջոցներ ձեռնարկի դրանց մասին հաշվետվությունների վերաբերյալ:
41. Գործադիր խորհուրդն ուսումնասիրում է Մասնակից պետությունների արտահայտած յուրաքանչյուր մտահոգություն սույն Պայմանագրի հետ հնարավոր անհամապատասխանության եւ Պայմանագրով սահմանված կանոնների չարաշահման վերաբերյալ: Այս ընթացքում Գործադիր խորհուրդը խորհրդակցում է ներգրավված Մասնակից պետությունների հետ եւ նպատակահարմարության դեպքում Մասնակից պետությունից պահանջում է միջոցներ ձեռնարկել սահմանված ժամանակահատվածում իրավիճակը շտկելու ուղղությամբ: Այս չափով, որքանով Գործադիր խորհուրդը անհրաժեշտ է համարում հետագա գործողությունները, նաև, ի թիվս այլ միջոցների, ձեռնարկում է հետեւյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.
- ա) ծանուցում է բոլոր Մասնակից պետություններին խնդրի կամ հարցի մասին,
- բ) ներկայացնում է խնդիրը կամ հարցը Խորհրդաժողովի ուշադրությանը,
- գ) առաջարկություններ է ներկայացնում Խորհրդաժողովին կամ,
- նպատակահարմարության դեպքում, միջոցներ է ձեռնարկում իրավիճակը շտկող եւ համապատասխանությունը ապահովող միջոցների վերաբերյալ՝ 5-րդ հոդվածի համաձայն:

## Դ. Տեխնիկական քարտուղարություն

42. Տեխնիկական քարտուղարությունն աջակցում է Մասնակից պետություններին սույն Պայմանագրի իրականացման գործում: Տեխնիկական քարտուղարությունն աջակցում

է Խորհրդաժողովին եւ Գործադիր խորհրդին՝ նրանց գործառույթների կատարման ընթացքում: Տեխնիկական քարտուղարությունն իրականացնում է սույն Պայմանագրով իրեն Վստահված վերահսկողության եւ այլ գործառույթները, ինչպես նաև այն գործառույթները, որոնք հանձնարարված են Խորհրդաժողովի եւ Գործադիր խորհրդի կողմից՝ համաձայն սույն Պայմանագրի: Տեխնիկական քարտուղարության կազմի մեջ, որպես նրա անբաժանելի մաս, մտնում է Տվյալների միջազգային կենտրոնը:

43. Տեխնիկական քարտուղարության՝ սույն Պայմանագրին համապատասխանությունը վերահսկելու վերաբերյալ գործառույթները, 4-րդ հոդվածի եւ Արձանագրության համաձայն, այդ թվում, ներառում են.

ա) պատասխանատվություն Դիտարկման միջազգային համակարգի գործարկման վերահսկողության եւ համակարգման համար,

բ) Տվյալների միջազգային կենտրոնի գործարկում,

գ) Դիտարկման միջազգային համակարգի տվյալների կանոնավոր ստացում, մշակում, վերլուծում եւ գեկուցում,

դ) դիտարկող կայանների տեղակայմանը եւ գործարկմանը տեխնիկական օգնություն եւ աջակցություն,

ե) աջակցություն Գործադիր խորհրդին Մասնակից պետությունների միջեւ խորհրդակցությունների եւ պարզաբանումների դյուրացման գործում,

զ) տեղում տեսչական ստուգումներ անցկացնելու վերաբերյալ հայցերի ստացում եւ դրանց մշակում, Գործադիր խորհրդի կողմից նման հայցերի ընսարկման դյուրացում, տեղում տեսչական ստուգումների անցկացման նախապատրաստական աշխատանքների կատարում եւ դրանց անցկացման ընթացքում տեխնիկական օգնության ապահովում, հաշվետվությունների ներկայացում Գործադիր խորհրդին,

ե) Մասնակից պետությունների, այլ պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների վերաբերյալ բանակցությունների վարում եւ, Գործադիր խորհրդի նախնական հավանությամբ Մասնակից պետությունների կամ այլ պետությունների հետ վերահսկող գործունեության առնչվող ցանկացած նման այլ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքում, եւ

ը) աջակցություն Մասնակից պետություններին նրանց ազգային իշխանությունների միջոցով սույն Պայմանագրի շրջանակներում վերահսկողության այլ խնդիրների վերաբերյալ:

44. Տեխնիկական քարտուղարությունը մշակում եւ հաստատում է վերահսկող ռեժիմի գործունեության տարբեր բաղադրամասերը կարգավորող՝ Գործադիր խորհրդի հաստատմանը ենթակա Գործարկման ձեռնարկներ՝ համաձայն 4-րդ հոդվածի եւ Արձանագրության: Այդ ձեռնարկները չեն կազմում սույն Պայմանագրի կամ Արձանագրության անբաժանելի մասը եւ կարող են փոփոխվել Տեխնիկական քարտուղարության կողմից՝ ենթակա լինելով Գործադիր խորհրդի հաստատմանը: Տեխնիկական քարտուղարությունն անհապաղ տեղեկացնում է Մասնակից պետություններին

Գործարկման ձեռնարկներում կատարված ցանկացած փոփոխության մասին:

45. Կարչական հարցերի վերաբերյալ Տեխնիկական քարտուղարության գործառույթները ներառում են.

ա) Կազմակերպության ծրագրի եւ բյուջեի նախագծի նախապատրաստումը եւ ներկայացումը Գործադիր խորհրդին,

բ) սույն Պայմանագրի իրագործման վերաբերյալ Կազմակերպության հաշվետվության նախագծի նախապատրաստումը եւ ներկայացումը Գործադիր խորհրդին, ինչպես նաև այլ հաշվետվությունները, որոնք կարող են պահանջել խորհրդաժողովը կամ Գործադիր խորհուրդը,

գ) Վարչական եւ տեխնիկական օգնության տրամադրումը խորհրդաժողովին,  
Գործադիր խորհրդին եւ այլ օժանդակ մարմիններին,

դ) Կազմակերպության անունից սույն Պայմանագրի իրականացմանն առնչվող  
հաղորդագրությունների ուղարկումը եւ ստացումը,

ե) Կազմակերպության եւ այլ միջազգային կազմակերպությունների միջեւ  
ցանկացած համաձայնագրին վերաբերող Վարչական պարտականությունների  
կատարումը:

46. Մասնակից պետություններից Կազմակերպության ուղարկվող բոլոր  
հարցումները եւ ծանուցումները Ազգային իշխանությունների միջոցով փոխանցվում են  
Գլխավոր տնօրենին: Հարցումները եւ ծանուցումները կազմվում են սույն Պայմանագրի  
պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Իր պատասխաններում Գլխավոր տնօրենն  
օգտագործում է այն լեզուն, որով կազմված են փոխանցված հարցումը եւ ծանուցումը:

47. Ինչ վերաբերում է Կազմակերպության բյուջեի նախագիծը նախապատրաստելու  
եւ այն Գործադիր խորհրդին ներկայացնելու Տեխնիկական քարտուղարության  
պարտականություններին, Տեխնիկական քարտուղարությունը սահմանում է վարում  
որպես Դիտարկման միջազգային համակարգի մաս հիմնադրված բոլոր սարքավորումների  
ծախսերի հետ կապված հստակ հաշվապահությունը: Բյուջեի եւ ծրագրի նախագծի  
նկատմամբ նույնանման մոտեցում է ցուցաբերվում Կազմակերպության գործունեության  
բոլոր մյուս տեսակների դեպքում:

48. Տեխնիկական քարտուղարությունն անհապաղ տեղեկացնում է Գործադիր  
խորհրդին իր գործառույթները կատարելիս ծագած ցանկացած խնդրի մասին, որև իրեն  
հայտնի է դարձել իր գործունեությունն իրականացնելիս, եւ որը ինքը չի կարողացել  
լուծել համապատասխան Մասնակից պետությունների հետ խորհրդակցությունների  
միջոցով:

49. Տեխնիկական քարտուղարությունը բաղկացած է Գլխավոր տնօրենից, որը նրա  
դեկավարն է ու գլխավոր Վարչական պաշտոնյան, եւ այնպիսի գիտական, տեխնիկական  
եւ

այլ անձնակազմից, որը կարող է պահանջվել: Գլխավոր տնօրենը նշանակվում է  
Խորհրդաժողովի կողմից, Գործադիր խորհրդի առաջարկով, չորս տարի ժամկետով, որը  
կարող է երկարաձգվել եւս մեկ ժամկետով, բայց ոչ ավել: Առաջին Գլխավոր տնօրենը  
նշանակվում է Խորհրդաժողովի կողմից, նրա առաջին նստաշրջանի ժամանակ՝  
Նախապատրաստական հանձնաժողովի առաջարկով:

50. Գլխավոր տնօրենը պատասխանատու է Խորհրդաժողովի եւ Գործադիր խորհրդի  
առջեւ անձնակազմի նշանակման եւ Տեխնիկական քարտուղարության կազմակերպման ու  
գործունեության համար: Անձնակազմը աշխատանքի ընդունելու եւ ծառայության  
պայմանները որոշելու ժամանակ անհրաժեշտ է պահովել մասնագիտական  
փորձագիտության, փորձառության, արդյունավետության, որակավորման եւ  
բարեխողության բարձրագույն չափանիշները: Միայն Մասնակից պետությունների  
քաղաքացիները կարող են ծառայել որպես Գլխավոր տնօրեն, տեսուչներ կամ  
մասնագիտական եւ գրասենյակային ծառայողների անձնակազմի անդամներ: Պատշաճ  
ուշադրություն պետք է հատկացնել անձնակազմի ընտրությունը հնարավորին չափ լայն  
աշխարհագրական սկզբունքով կատարելուն: Հավաքագրումը կատարվում է այն  
սկզբունքով, որ անձնակազմը պետք է առնվազն անհրաժեշտ հնարավորություններ  
ունենա Տեխնիկական քարտուղարության պարտականությունները պատշաճորեն  
կատարելու  
համար:

51. Գլխավոր տնօրենը, նպատակահարմարության դեպքում, Գործադիր խորհրդի հետ  
խորհրդակցելուց հետո կարող է հիմնադրել գիտական փորձագետների ժամանակավոր  
աշխատանքային խմբեր՝ կոնկրետ խնդիրների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու  
համար:

52. Իրենց պարտականությունները կատարելիս Գլխավոր տնօրենը, տեսուչները,  
տեսուչների օգնականները եւ անձնակազմի այլ անդամները չափությունը դիմեն կամ  
ցուցումներ ստանան որեւէ Կառավարությունից կամ Կազմակերպությունից դուրս  
գործող ցանկացած այլ աղբյուրից: Նրանք պետք է ծեռնպահ մնան ցանկացած  
գործողությունից, որը կարող է բացասաբար ազդել իրենց՝ որպես միայն

Կազմակերպությանը հաշվետու միջազգային պաշտոնյաների դիրքերի վրա: Գլխավոր տնօրենը պատասխանատվություն է կրում տեսչական թիմի գործունեության համար:

53. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է հարգի Գլխավոր տնօրենի, տեսուչների, տեսուչների օգնականների եւ անձնակազմի այլ անդամների պարտականությունների բացառապես միջազգային բնույթը եւ պարտականությունների կատարման ընթացքում չփորձի ներգործել նրանց վրա:

#### Ե. Արտոնություններ եւ անձեռնմխելիություն

54. Կազմակերպությունը Մասնակից պետության տարածքում կամ նրա իրավասության կամ հսկողության ներքո գտնվող ցանկացած վայրում պետք է օգտվի այնպիսի իրավական հևարավորություններից եւ այնպիսի արտոնություններից ու անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են իր գործառույթների կատարման համար:

55. Մասնակից պետությունների պատվիրակները իրենց տեղակալների եւ խորհրդականների հետ միասին, Գործադիր խորհրդի կազմում ընտրված անդամների ներկայացուցիչները իրենց տեղակալների եւ խորհրդականների հետ միասին, Գլխավոր տնօրենը, տեսուչները, տեսուչների օգնականները եւ Կազմակերպության աշխատակազմի անդամները օգտվում են այնպիսի արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են Կազմակերպության հետ կապված իրենց գործառույթների անկախ իրականացման համար:

56. Սույն հոդվածում նշված իրավական հևարավորությունը, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը սահմանվում են Կազմակերպության եւ Մասնակից պետությունների, ինչպես նաև Կազմակերպության եւ Կազմակերպության նստավայր հանդիսացող պետության միջեւ կնքված համաձայնագրերում: Նման համաձայնագրերը ըննարկվում եւ հաստատվում են 26-րդ կետի "ը" եւ "թ" ենթակետերի համաձայն:

57. Անկախ 54-րդ եւ 55-րդ կետերից՝ Վերահսկող գործունեության ընթացքում Գլխավոր տնօրենը, տեսուչները, տեսուչների օգնականները եւ Տեխնիկական քարտուղարության անձնակազմի անդամներն օգտվում են արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնք սահմանված են Արձանագրության մեջ:

#### ՀՈԴՎԱԾ III. ԱՇԳԱՌԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր սահմանադրական ընթացակարգերի համաձայն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ սույն Պայմանագրի համաձայն իր պարտավորությունները կատարելու համար: Մասնավորապես, նա պետք է ձեռնարկի ցանկացած անհրաժեշտ միջոցառում, որպեսզի:

ա) արգելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իր տարածքում կամ իր իրավասության տակ գտնվող ցանկացած այլ վայրում, ինչպես դա ճանաչված է միջազգային իրավունքով, զբաղվել սույն Պայմանագրով Մասնակից պետության արգելված ցանկացած գործունեությամբ,

բ) արգելի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց զբաղվել ցանկացած նման գործունեությամբ իր հսկողության տակ գտնվող ցանկացած վայրում, եւ

գ) միջազգային իրավունքի համաձայն՝ արգելի իր երկրի քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձանց զբաղվել նման գործունեությամբ ցանկացած վայրում:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն համագործակցում է Մասնակից պետությունների հետ եւ տրամադրում է համապատասխան իրավաբանական օգնություն՝ 1-ին կետով նախատեսված պարտավորությունների կատարումը ոյուրացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն տեղեկացնում է Կազմակերպությանը սույն հոդվածի համաձայն իրականացրած միջոցառումների մասին:

4. Պայմանագրով իր պարտականությունները կատարելու համար յուրաքանչյուր Մասնակից պետություն նշանակում կամ իիմնադրում է Ազգային իշխանություն եւ այդ մասին տեղեկացնում է Կազմակերպությանը Մասնակից պետության համար Պայմանագրի

ուժի մեջ մտնելուն պես: Ազգային իշխանությունը ծառայում է որպես ազգային

համադրման կենտրոն Կազմակերպության եւ մյուս Կողմ պետությունների միջեւ կապ պահպանելու համար:

## ՀՈՂՎԱԾ IV. ՎԵՐԱՐՍԿՈՒՄ

### Ա. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Պայմանագրի կատարման վերահսկողությունը իրականացնելու նպատակով պետք է հիմնադրվի հետեւյալ տարրերից բաղկացած վերահսկողության ռեժիմ.

- ա) Դիտարկման միջազգային համակարգ,
- բ) խորհրդակցություններ եւ պարզաբանումներ,
- գ) տեղում անցկացվող տեսչական ստուգումներ, եւ
- դ) վստահություն ամրապնդող միջոցառումներ:

Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից վերահսկողության ռեժիմը պետք է ուսակ լինի բավարարելու սույն Պայմանագրով սահմանված վերահսկողության պահանջները:

2. Վերահսկողության միջոցառումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ տեղեկատվության վրա, պետք է սահմանափակվեն սույն Պայմանագրի առարկայով, իրագործվեն Մասնակից պետության ինքնիշխանության լիակատար հարգման հիման վրա՝

պատճառելով ինարավորինս քիչ անհանգստություն եւ ապահովելով իրենց խնդիրների եւ նպատակների արդյունավետ եւ ժամանակին կատարումը: Յուրաքանչյուր Մասնակից պետությունը ձեռնպահ է մուտք վերահսկողության իրավունքի ցանկացած չարաշահումից:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետությունը պարտավորվում է սույն Պայմանագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հիմնադրվող իր Ազգային իշխանության միջոցով համագործակցել Կազմակերպության եւ մյուս Մասնակից պետությունների հետ, որպեսզի դյուրացնի սույն Պայմանագրի իրագործման վերահսկողությունը, այդ թվում.

ա) ստեղծելով անհրաժեշտ հարմարություններ՝ վերահսկողության այս միջոցառումներին մասնակցելու եւ անհրաժեշտ կապ հաստատելու համար,  
բ) Դիտարկման միջազգային համակարգի մաս կազմող ազգային կայաններից ստացված

տվյալների տրամադրմամբ,

գ) նպատակահարմարության դեպքում մասնակցելով խորհրդակցությունների եւ պարզաբանումների գործընթացին,

- դ) թույլատրելով տեղում տեսչական ստուգումներ, եւ

ե) նպատակահարմարության դեպքում մասնակցելով վստահությունն ամրապնդող միջոցառումներին:

4. Բոլոր Մասնակից պետությունները, անկախ իրենց տեխնիկական եւ ֆինանսական հնարավորություններից, օգտվում են վերահսկողության հավասար իրավունքներից եւ իրենց վրա վերցնում են վերահսկողության ենթարկվելու հավասարազոր պարտավորություններ:

5. Սույն Պայմանագրի նպատակների համար ոչ մի Մասնակից պետություն չի գրկում վերահսկողության ազգային տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված տեղեկատվությունն օգտագործելուց միջազգային իրավունքի համընդիանությունը կազմունքներին համապատասխանող ձեռով, ներառյալ պետությունների ինքնիշխանության

սկզբունքներին համապատասխան օգտագործելու հնարավորությունը:

6. Չոանց վևասելու Մասնակից պետությունների՝ սույն Պայմանագրին չվերաբերող գգայուն սարքերը, գործունեության ձեւերը եւ տեղանքները պաշտպանելու իրավունքը, Մասնակից պետությունները չեն միջամտեն սույն Պայմանագրի վերահսկողության ռեժիմի տարրերով կամ 5-րդ կետի համաձայն գործարկվող վերահսկողության ազգային տեխնիկական միջոցներով:

7. Յուրաքանչյուր Մասնակից պետությունը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու սույն Պայմանագրին չվերաբերող գգայուն սարքերի պահպանման եւ գաղտնի տեղեկատվության ու տվյալների հրապարակումը կանխելու համար:

8. Ավելին, պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները վերահսկողության գործունեության ընթացքում ձեռք բերված քաղաքացիական եւ ռազմական գործունեությանը եւ սարքավորումներին վերաբերող ցանկացած տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:

9. 8-րդ կետից ելնելով՝ Կազմակերպության կողմից սույն Պայմանագրով սահմանված վերահսկողության ռեժիմի միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը տրամադրվում է բոլոր Մասնակից պետություններին՝ սույն Պայմանագրի եւ Արձանագրության համապատասխան դրույթներին համաձայն:

10. Սույն Պայմանագրի դրույթները չեն մեկնարանվում որպես գիտական և պատակներով տվյալների միջազգային փոխանակումը սահմանափակող:

11. Յուրաքանչյուր Մասնակից պետությունն պարտավորվում է համագործակցել Կազմակերպության եւ մյուս Մասնակից պետությունների հետ վերահսկողության ռեժիմի բարելավման եւ վերահսկողության տեսանկյունից դիտարկվող լրացուցիչ դիտարկման տեխնոլոգիաների հնարավորությունների ուսումնասիրման գործում, ինչպիսիք են Ելեկտրամագնիսական իմպուլսային դիտարկումը կամ արքանյակային դիտարկումը՝ անհրաժեշտության դեպքում սույն Պայմանագրի իրագործման նկատմամբ արդյունավետ ել

ինայողական վերահսկողության հատուկ միջոցների օրգացումն ապահովելու նպատակով:

Նման միջոցները պետք է համաձայնության դեպքում ներառվեն սույն Պայմանագրում առկա դրույթներում, Արձանագրության մեջ եւ/կամ որպես Արձանագրության լրացուցիչ հատվածներ՝ 7-րդ հոդվածին համապատասխան, կամ որոշակի դեպքերում արտացոլվեն Գործարկման ձեռնարկներում՝ 2-րդ հոդվածի 44-րդ կետին համաձայն:

12. Մասնակից պետությունները պարտավորվում են զարգացնել համագործակցությունը միմյանց հետ, որպեսզի դյուրացնեն եւ մասնակցեն սույն Պայմանագրի վերահսկողության ընթացքում օգտագործվող տեխնոլոգիաներին առնչվող՝ հնարավորին չափ լիակատար փոխանակմանը՝ նպատակ ունենալով բոլոր Մասնակից պետություններին հնարավորություն տալ ապահովել ազգային մակարդակով վերահսկողության միջոցների ներդրման հնարավորությունների ամրապնդումը եւ օգտվել նման տեխնոլոգիաների խաղաղ նպատակով օգտագործման առավելություններից:

13. Սույն Պայմանագրի դրույթներն իրականացվում են այնպես, որ չխոչընդոտվի խաղաղ նպատակներով միջուկային եներգիայի օգտագործման հետագա օրգացման ուղղությամբ Մասնակից պետությունների տնտեսական եւ տեխնիկական առաջընթացը:

Տեխնիկական քարտուղարության վերահսկողական պարտականությունները

14. Վերահսկողության ոլորտում սույն Պայմանագրում եւ Արձանագրության մեջ նշված իր պարտավորությունները կատարելիս Տեխնիկական քարտուղարությունը, Մասնակից պետությունների հետ համագործակցելով, պետք է սույն Պայմանագրի նպատակով.

ա) պայմանավորվածություններ ձեռք բերի սույն Պայմանագրի՝ վերահսկողության առնչվող տվյալների ստացման եւ բաշխման, արդյունքների մասին գեկուցների վերաբերյալ, Պայմանագրի դրույթների պայմանների համաձայն, եւ ստեղծի այս խնդրին համապատասխան գլոբալ հաղորդակցությունների ենթակառւուցվածք,

բ) կանոնավոր կերպով իր Տվյալների միջազգային կենտրոնի միջոցով, որը սկզբունքորեն պետք է լինի տվյալների պահման եւ տվյալների մշակման համար կենտրոնական կետը Տեխնիկական քարտուղարության ներսում.

ի) ստանա եւ նախաձեռնի տվյալների ստացման հայցեր Դիտարկման միջազգային համակարգից,

ii) ընդունված կարգով խորհրդակցության եւ պարզաբանման ընթացքի արդյունքում ստանա տվյալներ տեղում անցկացվող տեսչական ստուգումներից եւ վստահություն ամրապնդող միջոցառումներից, եւ

iii) Մասնակից պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստանա այլ համապատասխան տվյալներ՝ սույն Պայմանագրի եւ Արձանագրության համաձայն,

գ) կառավարի, համակարգի եւ ապահովի Դիտարկման միջազգային համակարգի եւ դրա

բաղադրիչ մասերի ու Տվյալների միջազգային կենտրոնի գործությունը՝ համապատասխան Գործարկման ձեռնարկների համաձայն,

դ) կանոնավոր կերպով մշակի, վերլուծի եւ գեկուցի Դիտարկման միջազգային համակարգի տվյալները՝ համաձայնեցված ընթացակարգերի համաձայն, որոնք թույլ են տալիս սույն Պայմանագրի արդյունավետ միջազգային վերահսկողությունը, եւ նպաստի համապատասխանության հետ կապված մտահոգությունների արագ լուծմանը,

Ե) բոլոր Մասնակից պետություններին հասանելի դարձնի ինչպես չմշակված, այնպես էլ մշակված բոլոր տվյալները եւ ցանկացած գեկուցվող արդյունը՝ յուրաքանչյուր Մասնակից պետության կողմից Դիտարկման միջազգային համակարգի տվյալների օգտագործման համար պատասխանատվության ստանձնման համար՝ 2-րդ հոդվածի

7-րդ կետի եւ սույն հոդվածի 8-րդ եւ 13-րդ կետերի համաձայն,

զ) բոլոր Մասնակից պետություններին տրամադրի հավասար, բաց, հարմարավետ եւ ժամանակին մուտք դեպի պահպանվող բոլոր տվյալները,

Ե) պահպանի ինչպես չմշակված, այնպես էլ մշակված բոլոր տվյալները եւ գեկուցվող արդյունընթերը,

ը) համակարգի եւ դյուրացնի Դիտարկման միջազգային համակարգին ներկայացված լրացուցիչ տվյալների ստացման հայցերը,

Թ) համակարգի լրացուցիչ տվյալների ստացման համար մի Մասնակից պետությունից մեկ այլ Մասնակից պետությանը ներկայացված հայցերը,

Ժ) տրամադրի տեխնիկական օգնություն եւ աջակցություն վերահսկող սարքավորումների եւ համապատասխան հաղորդակցության միջոցների տեղադրման եւ Գործարկման համար, որտեղ այդպիսի օգնություն եւ աջակցություն պահանջվում է շահագրգիռ պետության կողմից,

Ժա) ցանկացած Մասնակից պետության, Նրա հայցի համաձայն, հասանելի դարձնի վերահսկողության ռեժիմից ստացված տվյալները համադրելու, պահելու, մշակելու, վերլուծելու եւ գեկուցելու՝ Տեխնիկական քարտուղարության եւ Տվյալների միջազգային կենտրոնի կողմից օգտագործվող մեթոդները, եւ

Ժթ) վերահսկի, գնահատի եւ գեկուցի Դիտարկման միջազգային համակարգի եւ Տվյալների միջազգային կենտրոնի ընդհանուր աշխատանքի մասին:

15. Համաձայնեցված եւ Տեխնիկական քարտուղարության կողմից օգտագործվելիք այն ընթացակարգերի կատարմանն առնչվող վերահսկողության պարտավորությունները, որոնք նշված են 14-րդ կետում եւ մանրամասն նկարագրված են Արձանագրության մեջ, պետք է մշակված լինեն համապատասխան Գործարկման ձեռնարկներում:

## Բ. Դիտարկման միջազգային համակարգ

16. Դիտարկման միջազգային համակարգը պարունակում է սարքավորումներ սեյսմոլոգիական դիտարկման, ճառագայթամիջուկային դիտարկման համար, ներառյալ վկայագրված լաբորատորիաները, հիդրոակուստիկ դիտարկման, ենթաձայնային դիտարկման համար եւ հաղորդակցության համապատասխան միջոցներ, որոնք պետք է աջակցություն ստանան Տեխնիկական քարտուղարության Տվյալների միջազգային կենտրոնի կողմից:

17. Դիտարկման միջազգային համակարգն ընկնում է Տեխնիկական քարտուղարության լիազորության տակ: Դիտարկման միջազգային համակարգի բոլոր վերահսկող սարքավորումները պատկանում են եւ գործարկվում են այն պետությունների կողմից, որոնք Արձանագրության համաձայն, ստանում են դրանք կամ այլ կերպ պատասխանատվություն են ստանձնում դրանց համար:

18. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իրավունք ունի մասնակցել տվյալների միջազգային փոխանակմանը եւ մուտք ունենալ դեպի այն բոլոր տվյալները, որոնք հասանելի են Տվյալների միջազգային կենտրոնին: Յուրաքանչյուր Մասնակից պետություն համագործակցում է Տվյալների միջազգային կենտրոնի հետ իր Ազգային իշխանության միջոցով:

## Դիտարկման միջազգային համակարգի ֆինանսավորումը

19. Դիտարկման միջազգային համակարգի մեջ համակցված եւ Արձանագրության 1-ին Յավելվածի 1-Ա, 2-Ա, 3-րդ եւ 4-րդ այյուսակներում նշված սարքավորումների եւ նրանց գործելու համար, այս չափով, որքանով այդ սարքավորումների վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել համապատասխան պետության եւ Կազմակերպության միջեւ Տվյալների միջազգային կենտրոնին տվյալներ տրամադրելու վերաբերյալ՝ Արձանագրության եւ համապատասխան Գործարկման ձեռնարկների տեխնիկական պահանջների համաձայն, Կազմակերպությունը, Արձանագրության 1-ին մասի 4-րդ կետից ելնելով, հոգում է հետեւյալ ծախսերը.

ա) ցանկացած նոր սարքավորման ձեռքբերման եւ գոյություն ունեցող սարքավորումների կատարելագործման ծախսերը, եթե այդ սարքավորումների համար պատասխանատու պետությունն ինքը չի հոգում դրանք,

բ) Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումների գործարկման ու պահպանման, և երազյալ սարքավորման ֆիզիկական անվտանգության ծախսերը՝ դրանց նպատակահարմարության դեպքում, եւ այս տվյալների նույնականության ընթացակարգերի կիրառումը, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերված,

գ) Դիտարկման միջազգային համակարգի (չմշակված եւ մշակված) տվյալների փոխանցումը Տվյալների միջազգային կենտրոնին մատչելի ամենաուղիղ եւ ծախսերի տեսանկյունից արդյունավետ միջոցներով, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, համապատասխան հաղորդակցության օդակների միջոցով, վերահսկող կայաններից, լաբորատորիաներից, վերլուծական սարքավորումներից կամ ազգային տվյալների կենտրոններից կամ վերահսկող կայաններից այդպիսի տվյալների (նպատակահարմարության դեպքում ներառյալ փորձանմուշները) փոխանցումը դեպի լաբորատոր եւ վերլուծական սարքավորումներ, եւ

դ) Կազմակերպության կողմից փորձանմուշների վերլուծության ծախսերը:

20. Արձանագրության 1-ին Յավելվածի 1-Բ այյուսակում նշված օժանդակ ցանցի մաս հանդիսացող սեյսմիկ կայանների համար Կազմակերպությունը, ինչպես նշված է Արձանագրության 1-ին մասի 4-րդ կետից բխող համաձայնություններում եւ պայմանավորվածություններում, պետք է հոգա միայն հետեւյալ ծախսերը.

ա) Տվյալների միջազգային կենտրոնին տվյալների փոխանցման,

բ) այդ կայաններից տվյալների նույնականացման,

գ) կայանները պահանջվող տեխնիկական չափանիշներին համապատասխանեցնելու հետ,

եթե այդ սարքավորումների համար պատասխանատու պետությունն ինքը չի հոգում այդ ծախսերը,

դ) անհրաժեշտության դեպքում՝ սույն Պայմանագրի նպատակների համար նոր կայանների հիմնման, որտեղ համապատասխան սարքավորումներ ներկայում չկան, եթե այդպիսի սարքավորումների համար պատասխանատու պետությունն ինքը չի հոգում այդ ծախսերը, եւ

ե) ցանկացած այլ ծախս, որն առնչվում է Կազմակերպության կողմից պահանջվող տվյալների տրամադրմանը, ինչպես նշված է համապատասխան Գործարկման ձեռնարկներում:

21. Կազմակերպությունը հոգում է նաեւ Տվյալների միջազգային կենտրոնի կողմից գեկուցվող ապրանքների եւ ծառայությունների ստանդարտ շարքից պահանջված ընտրանու՝ յուրաքանչյուր Մասնակից պետությանը տրամադրելու ծախսերը, ինչպես նշված է Արձանագրության 1-ին մասի 2 բաժնում: Ցանկացած լրացուցիչ տվյալի կամ ապրանքի նախապատրաստման եւ փոխանցման ծախսը հոգում է հայցող Մասնակից պետությունը:

22. Մասնակից պետությունների կամ Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումներ ստացող կամ դրանց համար այլ կերպ պատասխանատվություն ստանձնող

պետությունների հետ կամքված համաձայնությունները կամ, համապատասխան դեպքերում, ձեռք բերված պայմանավորվածությունները պարունակում են պայմաններ այդ ծախսերը հոգալու վերաբերյալ: Այդպիսի պայմանները կարող են ներառել լրացուցիչ պայմանավորվածություններ, ըստ որոնց Մասնակից պետությունը հոգում է 19.ա Եւ 20.գ, դ Ենթակետերում նշված ծախսերից ցանկացածն այն սարքավորումների համար, որոնք նա ստանում է, կամ որոնց համար պատասխանատու է, եւ դա փոխհատուցվում է Կազմակերպությանը նախատեսված ֆինանսական անդամավճարի համապատասխան կրծատմամբ:

Այդպիսի կրծատումը չպետք է գերազանցի Մասնակից պետության՝ գնահատված տարեկան

ֆինանսական անդամավճարի 50 տոկոսը, սակայն կարող է տարածվել հաջորդ տարիների վրա: Մասնակից պետությունը կարող է այդպիսի կրծատումը կիսել մեկ այլ Մասնակից պետության հետ՝ իրենց միջեւ համաձայնությամբ կամ պայմանավորվածությամբ եւ Գործադիր խորհրդի համաձայնության դեպքում: Սույն կետերում նշված համաձայնությունները կամ պայմանավորվածությունները պետք է հավանություն ստանան

2-րդ հոդվածի 26.ը Եւ 38.թ Ենթակետերի համաձայն:

Փոփոխություններ Դիտարկման միջազգային համակարգում

23. 11-րդ կետում նշված ցանկացած միջոց, որը ներգործում է Դիտարկման միջազգային համակարգի վրա՝ դիտարկման տեխնոլոգիայի ավելացման կամ հանման միջոցով, համաձայնություն ձեռք բերելու դեպքում, ներառվում է սույն Պայմանագրի եւ Արձանագրության մեջ՝ համաձայն 7-րդ հոդվածի 1-6-րդ կետերի:

24. Յետելյալ փոփոխությունները Դիտարկման միջազգային համակարգում այն պետությունների համաձայնությամբ, որոնք ուղղակի ներգործություն են կրում դրանցից, համարվում են 7-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերից բխող վարչական կամ տեխնիկական բնույթի հարցեր.

ա) դիտարկման տվյալ տեխնոլոգիայի համար Արձանագրության մեջ նշված սարքավորումների քանակության փոփոխություններ, եւ

բ) փոփոխություններ առանձին սարքավորումների այլ դետալներում, որոնք արտացոլված են Արձանագրության 1-ին Հավելվածի այլուսակներում (Ներառյալ, inter alia այդ թվում, սարքավորման համար պատասխանատու պետությունը, Վայրը, սարքավորման անվանումը, սարքավորման տիպը եւ սարքավորման ածանցումը առաջևային

եւ օժանդակ սեյսմիկ ցանցերի միջեւ):

Եթե Գործադիր խորհրդողը, Ելնելով 7-րդ հոդվածի 8.դ Ենթակետից, առաջարկում է ընդունել այդպիսի փոփոխությունները, որպես կանոն, նա պետք է առաջարկի, 7-րդ հոդվածի 8.է Ենթակետի համաձայն, որ այդպիսի փոփոխությունները ուժի մեջ մտնեն Գլխավոր տնօրենի՝ դրանց հավանություն տալու ծանուցման պահից:

25. Գլխավոր տնօրենը Գործադիր խորհրդին են Մասնակից պետություններին 7-րդ հոդվածի 8.թ Ենթակետի համաձայն տեղեկատվություն եւ գնահատում փոխանցելիս 24-րդ կետից Ելնելով արված ցանկացած առաջարկի դեպքում ներառում է.

ա) առաջարկի տեխնիկական գնահատումը,

բ) առաջարկի վարչական եւ ֆինանսական ներգործության մասին հայտարարությունը,

գ) հաշվետվություն առաջարկից ուղղակի ներգործություն կրող պետությունների հետ խորհրդակցությունների վերաբերյալ, որը նշում է պարունակում նրանց համաձայնության վերաբերյալ:

Ժամանակավոր պայմանավորվածություններ

26. Արձանագրության 1-ին Հավելվածի այլուսակներում նշված դիտարկման սարքավորման նշանակալից կամ անվերականգնելի անսարքության դեպքերում կամ դիտարկման ապահովման այլ ժամանակավոր նվազեցումները ծածկելու համար Գլխավոր

տնօրենը, անմիջական ներգործություն կրող պետությունների հետ խորհրդակցելով, նրանց համաձայնությունը ձեռք բերելով եւ Գործադիր խորհրդի հաստատմամբ, նախաձեռնում է ժամանակավոր պայմանավորվածություններ ոչ ավելի, քան մեկ տարի տեղադրությամբ, որն անհրաժեշտության դեպքում կարող է նորացվել մեկ տարով՝ Գործադիր խորհրդի եւ անմիջական ներգործություն կրող պետությունների համաձայնությամբ: Այդպիսի պայմանավորվածությունները չպետք է ազդեն Դիտարկման միջազգային համակարգի գործարկող սարքավորումների քանակության վրա՝ գերազանցելով առնչվող ցանցի համար նշված քանակությունը, պետք է հասրավորին չափ համապատասխանեն առնչվող ցանցի Գործարկման ձեռնարկում մատնանշված տեխնիկական եւ գործարկման պահանջներին եւ պետք է իրականացվեն Կազմակերպության բյուջեի շրջանակներում: Ավելին, Գլխավոր տնօրենը պետք է քայլեր ձեռնարկի իրավիճակի ճշտման եւ դրա մշտական լուծման համար առաջարկեր անելու ուղղությամբ: Գլխավոր տնօրենը ծանուցում է բոլոր Մասնակից պետություններին սույն կետի համաձայն ընդունված ցանկացած որոշման մասին:

#### Ազգային սարքավորումների համագործակցություն

27. Մասնակից պետությունները կարող են նաեւ համագործակցության վերաբերյալ առանձին պայմանավորվածություններ ձեռք բերել Կազմակերպության հետ՝ Տվյալների միջազգային կենտրոնին դիտարկման ազգային կայաններից լրացուցիչ տվյալները հասանելի դարձնելու համար, որոնք պաշտոնապես Դիտարկման միջազգային համակարգի

մաս չեն կազմում:

28. Համագործակցության վերաբերյալ այդպիսի պայմանավորվածությունները կարող են ձեռք բերվել հետեւյալ կերպ.

ա) Մասնակից պետության պահանջով եւ այդ պետության հաշվին Տեխնիկական քարտուղարությունը քայլեր է ձեռնարկում, որոնք պահանջվում են հավաստելու համար, որ տվյալ դիտարկող սարքավորումը համապատասխանում է տեխնիկական եւ գործարկման պահանջներին, որոնք նշված են Դիտարկման միջազգային համակարգի սարքավորման համապատասխան Գործարկման ձեռնարկներում, եւ պայմանավորվածություններ է ձեռք բերում դրա տվյալների նույնականության վերաբերյալ: Ենթակա Գործադիր խորհրդի համաձայնությանը՝ Տեխնիկական քարտուղարություն այսուհետեւ պաշտոնապես ճանաչում է այդպիսի սարքավորումը որպես համագործակցող ազգային սարքավորում: Տեխնիկական քարտուղարությունը ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր վկայագրումը վերահստատելու համար՝ ընդունված կարգի համաձայն,

բ) Տեխնիկական քարտուղարությունը հաստատում է համագործակցող ազգային սարքավորումների ընթացիկ ցուցակը եւ ուղարկում է այն բոլոր Մասնակից պետություններին, եւ

գ) Տվյալների միջազգային կենտրոնը վկայակոչում է համագործակցող ազգային սարքավորումներից ստացված տվյալները, եթե այդպես է պահանջել Մասնակից պետությունը, խորհրդակցություններն ու պարզաբանումները դյուրացնելու եւ տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցերի ընթարկման նպատակներով՝ տվյալների փոխանցման ծախսերը թողնելով այդ Մասնակից պետությանը:

Պայմանները, որոնց դեպքում այդպիսի սարքավորումներից ստացված լրացուցիչ տվյալները հասանելի են դարձել, եւ որոնց դեպքում Տվյալների միջազգային կենտրոնը կարող է պահանջել հետագա կամ ավելի մասրամասն գեկուցում կամ պարզաբանումներ, վերամշակվում են համապատասխան դիտարկող ցանցի համար նախատեսված Գործարկման ձեռնարկում:

#### Գ. Խորհրդակցություն եւ պարզաբանում

29. Առանց խախտելու տեղում տեսչական ստուգում անցկացնելու ցանկացած Մասնակից պետության իրավունքը՝ Մասնակից պետությունները պետք է իրենց միջեւ

կամ Կազմակերպության հետ կամ միջոցով հնարավորության դեպքում առաջինը գործադրեն ամեն շանք՝ ցանկացած հարց պարզաբանելու եւ լուծելու համար, որը կարող է մտահոգություն առաջացնել սույն Պայմանագրի հիմնարար պարտավորություններին հնարավոր անհամապատասխանության կապակցությամբ:

30. Այն Մասնակից պետությունը, որն այլ Մասնակից պետությունից հայց է ստանում 29-րդ կետի համաձայն, հնարավորին չափ շուտ, բայց ոչ ուշ, քան հայցը ստանալուց 48 ժամ հետո, ամեն դեպքում, ապահովում է պարզաբանումներ հայցող Մասնակից պետությանը: Պահանջը ներկայացնող եւ ստացող Մասնակից պետությունները

կարող են տեղյակ պահել Գործադիր խորհրդին կամ Գլխավոր տնօրենին հայցի եւ պատասխանի մասին:

31. Մասնակից պետությունն իրավունք ունի Գլխավոր տնօրենին խնդրելու օժանդակել ցանկացած այնպիսի հարցի պարզաբանման գործում, որը կարող է մտահոգություն հարուցել Պայմանագրի հիմնարար պարտավորություններին հնարավոր անհամապատասխանության կապակցությամբ: Գլխավոր տնօրենը տրամադրում է Տեխնիկական

քարտուղարության տնօրինության տակ գտնվող համապատասխան տեղեկատվություն, որն

առնչվում է նման մտահոգությանը: Գլխավոր տնօրենը տեղեկացնում է Գործադիր խորհրդին հայցի եւ պատասխանով տրամադրված տեղեկատվության մասին, եթե հայցող Մասնակից պետությունը դա պահանջում է:

32. Մասնակից պետությունն իրավունք ունի Գործադիր խորհրդին խնդրելու պարզաբանում ստանալ այլ Մասնակից պետությունից ցանկացած հարցի շուրջ, որը կարող է մտահոգություն հարուցել Պայմանագրի հիմնարար պարտավորություններին հնարավոր անհամապատասխանության կապակցությամբ: Այդպիսի դեպքերում կիրառվում է հետեւյալը.

ա) Գործադիր խորհրդող պարզաբանման հայցը Գլխավոր տնօրենի միջոցով փոխանցում է այն Մասնակից պետությանը, որին ներկայացված է հայցը, ոչ ուշ, քան այն ստանալուց 24 ժամ հետո,

բ) Մասնակից պետությունը, որին ներկայացվում է հայցը, տրամադրում է պարզաբանումը Գործադիր խորհրդին հնարավորին չափ շուտ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան հայցը ստանալուց 48 ժամ հետո,

գ) Գործադիր խորհրդող նկատի է առնում պարզաբանումը եւ այն փոխանցում հայցը ներկայացրած Մասնակից պետությանը ոչ ուշ, քան այն ստանալուց 24 ժամ հետո,

դ) Եթե հայցող Մասնակից պետությունը համարում է, որ պարզաբանումը համարժեք չէ, նա իրավունք ունի պահանջելու Գործադիր խորհրդից ծեղզ բերել հետագա պարզաբանում այն Մասնակից պետությունից, որին ներկայացված է հայցը:

Գործադիր խորհրդող առանց հապաղելու տեղեկացնում է բոլոր մյուս Մասնակից պետություններին սույն կետի համաձայն ցանկացած պարզաբանման պահանջի, ինչպես նաև հայցը ստացող Մասնակից պետության ցանկացած պատասխանի մասին:

33. Եթե հայցող Մասնակից պետությունն անբավարար է համարում 32.դ կետի համաձայն արված պարզաբանումը, նա իրավունք ունի պահանջելու Գործադիր խորհրդի հանդիպում, որին իրավունք ունեն մասնակցելու Գործադիր խորհրդի անդամ չհանդիսացող, սակայն տվյալ հարցում ներգրավված Մասնակից պետությունները: Այդպիսի հանդիպման ժամանակ Գործադիր խորհրդող ընսում է հարցը եւ կարող է առաջարկել ցանկացած միջոց՝ 5-րդ հոդվածի համաձայն:

ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԱՐՓԱԿ ԱՐԳԵԼՄԱՆ  
ԴԱՅՄԱՆԱԳԻՐ  
(2-րդ մաս)

Դ. Տեղում անցկացվող տեսչական ստուգումներ

Տեղում տեսչական ստուգման անցկացնելու հայց

34. Զանկացած Մասնակից պետություն իրավունք ունի պահանջելու տեղում տեսչական ստուգում անցկացնել, սույն հոդվածի դրույթների եւ Արձանագրության 2-րդ մասի համաձայն, ցանկացած Մասնակից պետության տարածքում կամ նրա իրավասության կամ հսկողության ներքո գտնվող ցանկացած վայրում կամ ցանկացած վայրում, որը գտնվում է որեւէ պետության իրավասությունից կամ հսկողությունից դուրս:

35. Տեղում տեսչական ստուգում անցկացնելու միակ նպատակն է պարզաբանել, թե արդյոք իրականացվել է միջուկային գենքի փորձարկման պայթյուն կամ ցանկացած այլ միջուկային պայթյուն՝ 1-ին հոդվածի խախտմամբ, եւ, հնարավոր չափով, հավաքել փաստեր, որոնք կարող են օժանդակել ցանկացած հնարավոր խախտողի ինքնությունը պարզելուն:

36. Հայցը ներկայացնող Մասնակից պետությունը պարտավորվում է տեղում անցկացվող տեսչական ստուգման հայցը պահել սույն Պայմանագրի հարցերի շրջանակներում եւ հայցում տրամադրել տեղեկատվություն՝ 37-րդ կետի համաձայն: Հայցը ներկայացնող Մասնակից պետությունը ձեռնպահ է մուտք չիմասպորված եւ չարաշահող տեսչական հայցերից:

37. Տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը պետք է հիմնված լինի Դիտարկման միջազգային համակարգի կողմից հավաքված տեղեկատվության, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հետ համատեղելի ձեռվ վերահսկողության ազգային տեխնիկական միջոցներով ստացված համապատասխան տեխնիկական տեղեկատվության կամ դրանց համադրության վրա: Հայցը պետք է պարունակի տեղեկատվություն՝ համաձայն Արձանագրության 2-րդ մասի 41-րդ կետի:

38. Հայցը ներկայացնող Մասնակից պետությունը տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը ներկայացնում է Գործադիր խորհրդին եւ միաժամանակ Գլխավոր տնօրենին, որպեսզի վերջինիս գործընթացին անհապաղ սկիզբ դնի:

Տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցի փոխանցումից հետո ձեռնարկվող հետագա միջոցները

39. Գործադիր խորհրդին անհապաղ քննարկում է տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը այն ստանալուց հետո:

40. Գլխավոր տնօրենը տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը ստանալուց հետո՝ երկու ժամվա ընթացքում, տեղյակ է պահում հայցը ներկայացնող Մասնակից պետությանը այն ստանալու մասին եւ հայցի մասին հաղորդագրություն է ուղարկում այն Մասնակից պետությանը, որը ենթակա է տեսչական ստուգում անցկացման վեց ժամվա ընթացքում: Գլխավոր տնօրենը հավաստում է, որ հայցը համապատասխանում է Արձանագրության 2-րդ մասի 41-րդ կետում նշված պահանջներին, անհրաժեշտության դեպքում օժանդակում է հայց ներկայացնող Մասնակից պետությանը հայցը համապատասխանաբար լրացնելու գործում եւ հայցի վերաբերյալ հաղորդագրություն է ուղարկում Գործադիր խորհրդին եւ բոլոր մյուս Մասնակից պետություններին 24 ժամվա ընթացքում:

41. Եթե տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը համապատասխանում է պահանջներին, Տեխնիկական քարտուղարությունն առանց հապաղելու սկսում է տեղում տեսչական ստուգում անցկացնելու նախապատրաստությունները:

42. Գլխավոր տնօրենը Մասնակից պետության իրավասության կամ հսկողության ներքո գտնվող տեսչական ստուգման տարածքում տեղում տեսչական ստուգում անցկացնելու վերաբերյալ հայցն ստանալուն պես անհապաղ փորձում է պարզաբանում ստանալ այն Մասնակից պետությունից, որը ենթակա է տեսչական ստուգման անցկացման՝

հայցում բարձրացված մտահոգությունը պարզաբանելու եւ լուծելու համար:

43. Մասնակից պետությունը, որը պարզաբանման հայց է ստանում 42-րդ կետի համաձայն, Գլխավոր տնօրենին տրամադրում է բացատրություններ եւ այլ առնչվող տեղեկատվություն՝ դրանք հասանելի դարձնելով հնարավորին չափ շուտ, բայց ոչ ուշ, քան պարզաբանման հայցը ստանալուց 72 ժամ հետո:

44. Մինչեւ Գործադիր խորհրդի կողմից տեղում տեսչական ստուգում անցկացնելու վերաբերյալ հայցի մասին որոշման ընդունումը Գլխավոր տնօրենը Գործադիր խորհրդին անհապաղ փոխանցում է ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն, որը կարելի է ծերք բերել Դիտարկման միջազգային համակարգից, կամ որը տրամադրված է ցանկացած Մասնակից պետությունից՝ հայցում նշված դեպքի վերաբերյալ, Ներառյալ ցանկացած պարզաբանում՝ տրամադրված 42-րդ եւ 43-րդ կետերի համաձայն, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն Տեխնիկական քարտուղարությունից, որը Գլխավոր տնօրենը համարում է առնչվող, եւ որը պահանջել է Գործադիր խորհուրդը:

45. Եթե հայց Ներկայացնող Մասնակից պետությունը տեղում տեսչական ստուգում անցկացնելու վերաբերյալ հայցում բարձրացված մտահոգությունը չի համարում լուծված եւ իր հայցը հետ չի վերցնում, Գործադիր խորհուրդը որոշում է ընդունում հայցի վերաբերյալ՝ 46-րդ կետի համաձայն:

#### Գործադիր խորհրդի որոշումները

46. Գործադիր խորհուրդը տեղում տեսչական ստուգման անցկացման հայցի վերաբերյալ որոշումն ընդունում է հայց Ներկայացնող Մասնակից պետությունից հայցը ստանալուց ոչ ուշ, քան 96 ժամ հետո: Տեղում տեսչական ստուգման անցկացմանը հավանություն տալու որոշումն ընդունվում է Գործադիր խորհրդի անդամների առնվազն 30 դրական ճային դեպքում: Եթե Գործադիր խորհուրդը հավանություն չի տալիս տեղում տեսչական ստուգման անցկացմանը, ապա նախապատրաստությունները դադարեցվում են, եւ հայցի վերաբերյալ ոչ մի հետագա գործողություն չի ձեռնարկվում:

47. 46-րդ կետի համաձայն տեղում տեսչական ստուգման անցկացմանը հավանություն տալուց հետո ոչ ուշ, քան 25 օր հետո տեսչական թիմը Գլխավոր տնօրենի միջոցով Գործադիր խորհրդին փոխանցում է հաշվետվություն տեսչական ստուգման ընթացքի մասին: Տեսչական ստուգման շարունակումը համարվում է հավանության արժանացած, եթե Գործադիր խորհուրդը տեսչական ստուգման ընթացքի մասին հաշվետվությունը ստանալուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո իր անդամների ճայների մեծամասնությամբ չի որոշում չշարունակել տեսչական ստուգումը: Եթե Գործադիր խորհուրդը որոշում է չշարունակել տեսչական ստուգումը, ապա տեսչական ստուգումը դադարեցվում է, եւ տեսչական թիմը, համաձայն Արձանագրության 2-րդ մասի 109-րդ եւ 110-րդ կետերի, հնարավորին չափ շուտ թողնում է տեսչական ստուգման վայրը եւ տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության տարածքը:

48. Տեղում անցկացվող տեսչական ստուգման ընթացքում տեսչական թիմը կարող է Գործադիր տնօրենի միջոցով Գործադիր խորհրդին Ներկայացնել հորատում անցկացնելու առաջարկ: Գործադիր խորհուրդը նման առաջարկի վերաբերյալ որոշումն ընդունում է առաջարկը ստանալուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո: Հորատմանը հավանություն տալու որոշումն ընդունվում է Գործադիր խորհրդի բոլոր անդամների մեծամասնությամբ:

49. Տեսչական թիմը կարող է Գլխավոր տնօրենի միջոցով խնդրել Գործադիր խորհրդին երկարացնել տեսչական ստուգման տետողությունը Արձանագրության 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված 60 օր ժամկետից մինչեւ առավելագույնը 70 օր, եթե տեսչական թիմը գտնում է, որ երկարացնում էական նշանակություն ունի իր մասնատի իրականացման համար: Տեսչական թիմն իր հայցում նշում է, թե Արձանագրության 2-րդ մասի 6-րդ կետում թվարկված որ գործողությունները եւ տեխնիկական որ եղանակներն

Ե մտադիր օգտագործելու լրացուցիչ ժամանակահատվածում: Գործադիր խորհուրդը երկարացման վերաբերյալ որոշումն ընդունում է երկարացման մասին հայցը ստանալու ոչ ուշ, քան 72 ժամ հետո: Տեսչական ստուգման տեղողության երկարացմանը հավանություն տալու որոշումն ընդունվում է Գործադիր խորհրդի բոլոր անդամների մեջամասնությամբ:

50. Տեղում անցկացվող տեսչական ստուգման շարունակմանը 47-րդ կետի համաձայն հավանություն տալուց հետո՝ ցանկացած պահի, տեսչական թիմը կարող է Գլխավոր տնօրենի միջոցով Գործադիր խորհրդին ներկայացնել առաջարկ տեսչական ստուգումը դադարեցնելու վերաբերյալ: Նման առաջարկը համարվում է հավանության արժանացած, եթե Գործադիր խորհուրդը այդ առաջարկը ստանալուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո իր բոլոր անդամների ձայների մեջամասնությամբ չի որոշում չհաստատել տեսչական ստուգման դադարեցումը: Տեսչական ստուգման դադարեցման դեպքում տեսչական թիմը, համաձայն Արձանագրության 2-րդ մասի 109-րդ եւ 110-րդ կետերի, հնարավորին չափ շուտ թողնում է տեսչական ստուգման վայրը եւ տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության տարածքը:

51. Հայց ներկայացնող Մասնակից պետությունը եւ տեսչական ստուգման անցկացմանը ենթակա Մասնակից պետությունը կարող են մասնակցել տեղում տեսչական ստուգում անցկացնելու պահանջի շուրջ Գործադիր խորհրդի ըննարկումներին՝ առանց քվեարկելու իրավունքի: Հայց ներկայացնող Մասնակից պետությունը եւ տեսչական ստուգման ենթակա Մասնակից պետությունը կարող են, առանց քվեարկելու իրավունքի, մասնակցել նաև Գործադիր խորհրդի կողմից այդ տեսչական ստուգմանը վերաբերող ցանկացած հետագա ըննարկման:

52. Գլխավոր տնօրենը 24 ժամվա ընթացքում ծանուցում է բոլոր Մասնակից պետություններին, համաձայն 46-50-րդ կետերի, Գործադիր խորհրդի ցանկացած որոշման կամ իրեն ներկայացված՝ Գործադիր խորհրդի գեկույթների, պահանջների եւ առաջարկների մասին:

Գործադիր խորհրդի կողմից տեղում տեսչական ստուգման անցկացմանը հավանություն տալուն հաջորդող գործողությունները

53. Գործադիր խորհրդի հավանությունն ստացած տեսչական ստուգումն անհապաղ անցկացվում է Գործադիր տնօրենի կողմից նշանակված տեսչական թիմի կողմից եւ սույն Պայմանագրի եւ Արձանագրության դրույթներին համապատասխան: Տեսչական թիմը ժամանում է մուտքի կետ տեսչական ստուգում անցկացնելու վերաբերյալ հայց ներկայացնող Մասնակից պետության հայցը Գործադիր խորհրդի ստանալուց ոչ ուշ, քան 6 օր հետո:

54. Գործադիր տնօրենը հանձնում է տեսչական մանդատ՝ տեղում տեսչական ստուգում անցկացնելու համար: Տեսչական ստուգման մանդատը պարունակում է Արձանագրության 2-րդ մասի 42-րդ կետում նշված տեղեկատվությունը:

55. Գործադիր տնօրենը, Արձանագրության 2-րդ մասի 43-րդ կետի համաձայն, տեսչական ստուգման մասին տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությանը ծանուցում է մուտքի կետ տեսչական թիմի ժամանելուց ոչ ուշ, քան 24 ժամ առաջ:

Տեղում տեսչական ստուգման անցկացումը

56. Ցանկացած Մասնակից պետություն պետք է թույլատրի Կազմակերպությանը տեսչական ստուգում անցկացնել իր տարածքում կամ իր իրավասության կամ վերահսկողության ներքո գտնվող վայրերում՝ համաձայն սույն Պայմանագրի եւ Արձանագրության դրույթների: Այնուամենայնիվ, ոչ մի Մասնակից պետություն չպետք է միաժամանակ տեսչական ստուգումներ ընդունի իր տարածքում կամ իր իրավասության կամ վերահսկողության ներքո գտնվող տարածքներում եւ վայրերում:

57. Սույն Պայմանագրի եւ Արձանագրության դրույթների համաձայն՝ տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունն ունի:

ա) իր կողմից սույն Պայմանագրին համապատասխանությունը ցույց տալու եւ այդ

Նպատակով տեսչական թիմին իր մանդատը իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար հնարավոր ցանկացած ջանք գործադրելու իրավունք եւ պարտականություն,

բ) ազգային անվտանգության շահերը պաշտպանելու եւ տեսչական ստուգման նպատակներին չառնչվող գաղտնի տեղեկատվության հրապարակումը կանխելու համար, իր

կարծիքով, անհրաժեշտ միջոցներ ծեռևարկելու իրավունք,

գ) տեսչական ստուգման շրջանի սահմաններում միայն տեսչական ստուգման

նպատակներին առնչվող փաստերի հաստատման համար մուտք տրամադրելու

պարտավորություն՝ հաշվի առնելով՝ "բ" Ենթակետը եւ սահմանադրական բոլոր

պարտավորությունները, որոնք Մասնակից պետությունը կարող է ուսենալ

սեփականության իրավունքի, խուզարկության եւ բռնագրավման վերաբերյալ,

դ) 1-ին հոդվածով նախատեսված իր պարտավորությունների ցանկացած խախտում քողարկելու նպատակով սույն կետը կամ Արձանագրության 2-րդ մասի 88-րդ կետը չկիրառելու պարտավորություն,

ե) տեսչական ստուգման շրջանի սահմաններում տեսչական թիմի տեղաշարժի եւ, սույն Պայմանագրի ու Արձանագրության համաձայն, տեսչական գործողությունների անցկացման հնարավորությունները չսահմանափակելու պարտավորություն:

Տեղում անցկացվող տեսչական ստուգման համատեքստում մուտք նշանակում է ինչպես տեսչական թիմի եւ տեսչական սարքավորումների ֆիզիկական մուտք տեսչական ստուգման շրջան, այնպես էլ տեսչական գործողությունների անցկացում այդ շրջանի սահմաններում:

58. Տեղում տեսչական ստուգումը պետք է անցկացվի նվազագույն անհանգստություն պատճառելով՝ տեսչական ստուգման մանդատի արդյունավետ եւ ժամանակին իրականացման հետ համատեղելի եւ Արձանագրության մեջ շարադրված ընթացակարգերին համապատասխան: Տեսչական թիմը հնարավորության դեպքում սկսում է

նվազագույն անհանգստություն պատճառող ընթացակարգերից, այսուհետեւ անցնում է ավելի զգալի անհանգստություն պատճառող ընթացակարգերի միայն այն դեպքում, եթե գտնում է, որ դա անհրաժեշտ է սույն Պայմանագրին անհամապատասխանության վերաբերյալ մտահոգությունները բացահայտող տեղեկատվության հավաքման համար: Տեսուչները փնտրում են միայն այնպիսի տեղեկատվություն եւ տվյալներ, որոնք անհրաժեշտ են տեսչական ստուգման նպատակների համար, եւ ձգտում են նվազագույնի հասցնել միջամտությունը տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության բնականոն գործունեությանը:

59. Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը տեսչական ստուգման ընթացքում օժանդակում է տեսչական թիմին եւ դյուրացնում է տեսչական թիմի ինսդրի լուծումը:

60. Եթե տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը, գործելով Արձանագրության 2-րդ մասի 86-96-րդ կետերի համաձայն, սահմանափակում է մուտքը տեսչական ստուգման շրջան, ապա նա, տեսչական թիմի հետ խորհրդակցելով, գործադրում է յուրաքանչյուր հնարավոր ջանք, որպեսզի այլընտրանքային միջոցներով ցուցաբերի իր համապատասխանությունը սույն Պայմանագրին:

## Դիտորդ

61. Դիտորդի վերաբերյալ կիրառվում է հետեւյալը.

ա) տեսչական ստուգման հայց ներկայացնող Մասնակից պետությունը տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության համաձայնության դեպքում կարող է տեսչական ստուգման անցկացումը դիտարկելու համար ուղարկել ներկայացուցիչ, որը պետք է լինի տեսչական ստուգման հայց ներկայացնող կամ երրորդ Մասնակից պետության քաղաքացի,

բ) տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը գործադիր խորհրդի կողմից տեսչական ստուգման անցկացմանը հավանություն տրվելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, առաջարկված դիտորդի ընդունման կամ չընդունման մասին ժանուցում է գործադիր տևորենին,

գ) ընդունման դեպքում տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը, Արձանագրության համաձայն, դիտողին տրամադրում է մուտքի իրավունք,

դ) տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը, որպես կանոն, ընդունում է առաջարկված դիտողին, սակայն եթե տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը մերժում է առաջարկված դիտողին, ապա այդ փաստն արձանագրում է տեսչական ստուգման գեկույցում:

Պետք է առաջարկվի ոչ ավել, քան 3 դիտողի տեսչական ստուգման հայց Ներկայացնող Մասնակից պետությունների ընդհանուր թվից:

**Տեղում անցկացվող տեսչական ստուգման գեկույցները**

62. Տեսչական ստուգման գեկույցները պարունակում են.

ա) տեսչական թիմի կողմից իրականացված գործողությունների նկարագրությունը,

բ) տեսչական ստուգման նպատակին վերաբերող փաստագրական բացահայտումները,

գ) տեսչական ստուգման ընթացքում ցուցաբերված համագործակցության ամփոփումը,

դ) տեսչական ստուգման ընթացքում տրամադրված մուտքի աստիճանի, Ներառյալ տեսչական թիմին տրամադրված այլընտրանքային միջոցները, փաստագրական նկարագրությունը, եւ

ե) տեսչական ստուգման նպատակներին վերաբերող այլ մանրամասներ:

Չեկույցին կարող են կցվել տեսուչների կողմից արված բազմաթիվ դիտողություններ:

63. Գործադիր տնօրենը տեսչական ստուգման գեկույցների նախագծերը տրամադրում է տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությանը: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը իրավունք ունի 48 ժամվա ընթացքում Գործադիր տնօրենին ներկայացնել իր մեկնաբանություններն ու պարզաբանումները եւ նշել յուրաքանչյուր տեղեկատվություն կամ տվյալ, որը, իր կարծիքով, չի առնչվում տեսչական ստուգման նպատակներին եւ չափությունը տարածվի Տեխնիկական քարտուղարությունից դուրս: Գործադիր տնօրենն ուսումնասիրում է տեսչական ստուգման գեկույցի նախագծում փոփոխություններ կատարելու մասին տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության առաջարկները եւ հնարավորին չափ ընդգրկում է դրանք: Գործադիր տնօրենը տեսչական ստուգման գեկույցներին կցում է տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության մեկնաբանությունները եւ բացատրությունները:

64. Գործադիր տնօրենն անհապաղ փոխանցում է տեսչական ստուգման գեկույցը տեսչական ստուգման հայց ներկայացնող Մասնակից պետությանը, տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությանը, Գործադիր խորհրդին եւ բոլոր մյուս Մասնակից պետություններին: Այսուհետեւ Գործադիր տնօրենն անմիջականորեն Գործադիր խորհրդին եւ բոլոր մյուս Մասնակից պետություններին փոխանցում է նշանակված լաբորատորիաներում անցկացված փորձանմուշների վերլուծության յուրաքանչյուր արդյունք, Արձանագրության 2-րդ մասի 104-րդ կետի համաձայն, Դիտարկման միջազգային համակարգից ստացված համապատասխան տվյալները, տեսչական ստուգման

հայց ներկայացնող Մասնակից պետության եւ տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից

պետության գնահատականները, ինչպես նաև այլ տեղեկատվությունն, որը, ըստ Գործադիր տնօրենի, վերաբերում է խնդրո առարկային: Տեսչական ստուգման ընթացքի մասին 47-րդ կետում հիշատակված գեկույցի դեպքում Գործադիր տնօրենը գեկույցը փոխանցում է Գործադիր խորհրդին այդ կետում նշված ժամանակահատվածում:

65. Գործադիր խորհրդողը, իր լիազորությունների եւ գործառույթների համաձայն, ուսումնասիրում է 64-րդ կետի համաձայն տրամադրված տեսչական ստուգման

գեկույցը եւ ցանկացած այլ նյութ եւ հասցեագրում է բոլոր մտահոգությունները, ինչպիսիք են.

ա) արդյո՞ք առկա է անհամապատասխանություն սույն Պայմանագրին,

բ) արդյո՞ք չարաշահվել է տեսչական ստուգում պահանջելու իրավունքը:

66. Եթե Գործադիր խորհուրդը իր լիազորությունների եւ գործառույթների սահմաններում հանգում է այն եզրակացության, որ 65-րդ կետի վերաբերյալ անհրաժեշտ են հետագա քայլեր, ապա նա ձեռնարկում է միջոցներ 5-րդ հոդվածի համաձայն:

Տեղում տեսչական ստուգման անցկացման անլուրջ եւ անբարեխիղ պահանջներ

67. Եթե տեղում տեսչական ստուգում անցկացնելու պահանջի անլուրջ եւ անբարեխիղ լինելու փաստի հիման վրա Գործադիր խորհուրդը հավանություն չի տալիս տեսչական ստուգման անցկացմանը, կամ եթե տեսչական ստուգումը դադարեցվում է նույն պատճառներով, ապա Գործադիր խորհուրդը քննարկում եւ որոշում է, թե արդյո՞ք ձեռնարկելու է ստեղծված իրավիճակը շտկելու համար համապատասխան միջոցներ, ներառյալ հետեւյալը.

ա) պարտավորեցնել տեսչական ստուգման հայց ներկայացնող Մասնակից պետությանը հոգալ Տեխնիկական քարտուղարության կողմից կատարված նախապատրաստական աշխատանքների ծախսերը,

բ) գործադիր խորհրդի կողմից սահմանված ժամանակով կասեցնել տեսչական ստուգման հայց ներկայացնող Մասնակից պետության՝ տեսչական ստուգում ինդրելու իրավունքը,

գ) ժամանակավորապես կասեցնել տեսչական ստուգման հայց ներկայացնող Մասնակից

պետության՝ Գործադիր խորհրդի կազմում ներկայացված լինելու իրավունքը:

Ե. Վստահություն ամրապնդող միջոցներ

68. Որպեսզի.

ա) օգնություն լինի քիմիական պայթյուններին վերաբերող վերահսկողության տվյալների հևարակող սխալ մեկնաբանության պատճառով առաջացած յուրաքանչյուր մտահոգության ժամանակին լուծմանը, եւ

բ) աջակցություն լինի Դիտարկման միջազգային համակարգի բաղադրացանցի մաս կազմող կայանների դասակարգմանը,

յուրաքանչյուր Մասնակից պետություն պարտավորվում է համագործակցել Կազմակերպության եւ այլ Մասնակից պետությունների հետ Արձանագրության 3-րդ մասում նշված համապատասխան միջոցների իրագործման հարցում:

## ՀՐԴՎԱԾ V. ԻՐԱՎԿԻՃԱԿԻ ՇՏԿՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏՔՍԽԱՆՈՒԹՅԱՆՆ ԿՊԱՅՈՎՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ

### ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՆԵՐՎՈՅԱԼ ՊԱՏԺԱՄԻՉՈՑՆԵՐԸ

1. Խորհրդաժողովը, հաշվի առնելով, այդ թվում, նաեւ Գործադիր խորհրդի առաջարկները, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, ինչպես շարադրված է 2-րդ եւ 3-րդ կետերում, որպեսզի ապահովի համապատասխանությունը Պայմանագրին եւ շտկի կամ

վերականգնի ցանկացած իրավիճակ, որը խախտում է սույն Պայմանագրի դրույթները:

2. Այն դեպքերում, երբ Խորհրդաժողովը կամ Գործադիր խորհուրդը Մասնակից պետությունից պահանջում է շտկել Պայմանագրին համապատասխանության հետ կապված

խնդիրներ առաջացնող իրավիճակը, եւ Մասնակից պետությունն ունակ չէ բավարարելու ներկայացված հայցը նշված ժամանակահատվածում, Խորհրդաժողովը կարող է նաեւ, այդ թվում, որոշել սահմանափակել կամ կասեցնել այդ Մասնակից պետության կողմից սույն Պայմանագրով նախատեսված իրավունքների եւ արտոնությունների իրականացումը մինչեւ

Համաժողովն ընդունի այլ որոշում:

3. Այն դեպքերում, երբ սույն Պայմանագրի հիմնարար պարտավորություններին անհամապատասխանության հետեւանքով կարող է վնաս հասցվել սույն Պայմանագրի առարկային կամ նպատակին, Խորհրդաժողովը կարող է Մասնակից պետություններին

առաջարկել ձեռնարկել միջազգային իրավունքին համապատասխան հավաքական միջոցներ:

4. Խորհրդաժողովը կամ, այլընտրանքորեն, եթե դեպքը չափազանց իրատապ է, Գործադիր խորհուրդը կարող են հարցը, Ներառյալ համապատասխան տեղեկատվությունը եւ եզրակացությունները, Ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության ուշադրությանը:

## ՀՈՂՎԱԾ VI. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Սույն Պայմանագրի կիրառման կամ մեկնաբանության հետ կապված հևարավոր վեճերը կարգավորվում են սույն Պայմանագրի համապատասխան դրույթների եւ ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն:

2. Եթե սույն Պայմանագրի կիրառման կամ մեկնաբանության հետ կապված վեճ է ծագում երկու կամ ավելի Մասնակից պետությունների կամ մեկ կամ ավելի Մասնակից պետությունների եւ Կազմակերպության միջեւ, շահագրգիռ կողմերը խորհրդակցում են միմյանց հետ՝ նպատակ ունենալով շուտափույթ կարգավորել վեճերը բանակցությունների միջոցով կամ կողմերի ընտրած այլ խաղաղ միջոցներով, Ներառյալ սույն Պայմանագրի համապատասխան մարմիններին ուղղված դիմումով եւ, փոխադարձ համաձայնությամբ, դիմումով Միջազգային դատարանին՝ համաձայն Դատարանի Կանոնադրության: Ներգրավված կողմերը ձեռնարկված միջոցների մասին տեղեկացնում են Գործադիր խորհրդին:

3. Գործադիր խորհուրդը կարող է նպաստել սույն Պայմանագրի կիրառման կամ մեկնաբանության հետ կապված վեճերի կարգավորմանը ցանկացած միջոցով, որը նպատակահարմար է համարում, Ներառյալ իր բարի ծառայությունների առաջարկումը, կոչք վեճի կողմ հանդիսացող Մասնակից պետություններին՝ ճգտել կարգավորման իրենց ընտրած գործընթացի միջոցով, ինչպես նաև հարցը ներկայացնել խորհրդաժողովի ուշադրությանը եւ առաջարկել վերջնաժամկետ ցանկացած համաձայնեցված ընթացակարգի համար:

4. Խորհրդաժողովը քննարկում է Մասնակից պետության կողմից բարձրացված կամ Գործադիր խորհրդի կողմից խորհրդաժողովի ուշադրությանը ներկայացված վեճերի հետ կապված հարցերը: Խորհրդաժողովը, եթե անհրաժեշտ է համարում, հիմնադրում է մարմիններ կամ հանձնարարում է այդ մարմիններին վեճերի կարգավորման հետ կապված խնդիրները՝ 2-րդ հոդվածի 26.Ժ կետի համաձայն:

5. Խորհրդաժողովը եւ Գործադիր խորհուրդը առանձին լիազորված են, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Վեհաժողովի թույլտվությամբ, պահանջելու Միջազգային դատարանից խորհրդատվական կարծիք տալ Կազմակերպության գործունեության ոլորտում ծագող ցանկացած իրավական հարցի վերաբերյալ: Կազմակերպության եւ Միավորված ազգերի կազմակերպության միջեւ այդ նպատակի համար

կնքվում է համաձայնություն 2-րդ հոդվածի 38.Ժ կետի համաձայն:

6. Սույն հոդվածը չի խոչընդոտում 4-րդ եւ 5-րդ հոդվածների կատարմանը:

## ՀՈՂՎԱԾ VII. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ ցանկացած ժամանակ, ցանկացած Մասնակից պետություն կարող է փոփոխություններ առաջարկել սույն Պայմանագրում, Արձանագրության մեջ կամ Արձանագրության Հավելվածներում: Ցանկացած Մասնակից պետություն կարող է նաև առաջարկել փոփոխություններ անել, 7-րդ կետի համաձայն, Արձանագրության մեջ եւ Հավելվածներում: Փոփոխությունների վերաբերյալ առաջարկները Ենթարկվում են 2-6-րդ կետերում նշված ընթացակարգերին: Փոփոխությունների առաջարկները, 7-րդ կետի համաձայն, Ենթարկվում են 8-րդ կետի ընթացակարգին:

2. Առաջարկված փոփոխությունը քննարկվում եւ ընդունվում է միայն փոփոխությունների խորհրդաժողովի կողմից:

3. Փոփոխության ցանկացած առաջարկ փոխանցվում է Գլխավոր տնօրենին, որն իր հերթին այս փոխանցում է բոլոր Մասնակից պետություններին ու ավանդապահին եւ ստանում է Մասնակից պետությունների կարծիքները այդ առաջարկները քննարկելու համար Փոփոխությունների խորհրդաժողով հրավիրելու նպատակահարմարության վերաբերյալ: Եթե Մասնակից պետությունների մեծամասնությունը ոչ ուշ, քան այդ առաջարկի տարածումից 30 օր հետո ծանուցում են Գլխավոր տնօրենին, որ ինքը սատարում է այդ առաջարկի հետագա քննարկմանը, Գլխավոր տնօրենը գումարում է Փոփոխությունների խորհրդաժողով, որին հրավիրվում են բոլոր Մասնակից պետությունները:

4. Փոփոխությունների խորհրդաժողովս անցկացվում է խորհրդաժողովի կանոնավոր նստաշրջանից անմիջապես հետո, եթե այս բոլոր Մասնակից պետությունները, որոնք սատարում են Փոփոխությունների խորհրդաժողովի հրավիրմանը, չեն պահանջում այն անցկացնել ավելի շուտ: Փոփոխությունների խորհրդաժողովը ոչ մի դեպքում չի կարող կայանալ առաջարկված փոփոխության տարածումից հետո 60 օրվանից ուշ:

5. Փոփոխություններն ընդունվում են Փոփոխությունների խորհրդաժողովի կողմից՝ Մասնակից պետությունների մեծամասնության դրական քվեով, եթե ոչ մի Մասնակից պետությունը բացասական չի քվեարկում:

6. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում բոլոր Մասնակից պետությունների համար՝ Փոփոխությունների խորհրդաժողովին "կողմ" քվեարկած բոլոր Մասնակից պետությունների կողմից վավերացման կամ ընդունման փաստաթղթերի հանձնումից 30 օր հետո:

7. Սույն Պայմանագրի գործունեության եւ արդյունավետության ապահովման համար Արձանագրության 1-ին եւ 3-րդ մասերը եւ Արձանագրության 1-ին եւ 2-րդ Հավելվածները ենթակա են փոփոխությունների՝ 8-րդ կետի համաձայն, եթե առաջարկված փոփոխությունները վերաբերում են միայն վարչական կամ տեխնիկական բնույթ կրող հարցերին: Արձանագրության եւ Հավելվածների ցանկացած այլ դրույթ ենթակա չէ փոփոխությունների՝ 8-րդ կետի համաձայն:

8. 7-րդ կետի համաձայն առաջարկված փոփոխությունները կատարվում են հետեւյալ ընթացակարգի համաձայն:

ա) Առաջարկված փոփոխությունների տեքստը անհրաժեշտ տեղեկատվության հետ միասին փոխանցվում է Գլխավոր տնօրենին: Առաջարկի գնահատման համար լրացուցիչ տեղեկատվություն կարող է տրամադրվել ցանկացած Մասնակից պետության եւ Գլխավոր տնօրենի կողմից: Գլխավոր տնօրենն անհապաղ փոխանցում է ցանկացած նման առաջարկը եւ տեղեկատվություն բոլոր Մասնակից պետություններին, Գործադիր խորհրդին եւ Ավանդապահին:

բ) Առաջարկը ստանալուց ոչ ուշ, քան 60 օր հետո Գլխավոր տնօրենը գնահատում է այդ առաջարկը, որպեսզի որոշի այդ առաջարկի հետ կապված բոլոր հետեւանքները սույն Պայմանագրի դրույթների եւ դրա իրագործման համար, եւ փոխանցում է ցանկացած նման տեղեկատվություն բոլոր Մասնակից պետություններին եւ Գործադիր խորհրդին:

գ) Գործադիր խորհուրդն ուսումնասիրում է առաջարկն իր տրամադրության տակ եղած տեղեկատվության լույսի ներքո՝ ներառյալ 7-րդ կետում նշված պահանջներին այդ առաջարկի համապատասխանության հարցը: Առաջարկը ստանալուց ոչ ուշ, քան 90 օր

հետո Գործադիր խորհուրդը համապատասխան բացատրություններով ծանուցում է իր համաձայնության մասին բոլոր Մասնակից պետություններին՝ դրանք քննարկելու համար: Մասնակից պետությունները հաստատում են դրա ստացումը 10 օրվա ընթացքում:

դ) Եթե Գործադիր խորհուրդը բոլոր Մասնակից պետություններին առաջարկում է, որ առաջարկը պետք է ընդունվի, այն պետք է համարվի հավանություն ստացած, եթե առաջարկը ստանալուց հետո՝ 90 օրվա ընթացքում, ոչ մի Մասնակից պետություն դրան չի առարկում: Եթե Գործադիր խորհուրդն առաջարկում է մերժել այդ առաջարկը, այն համարվում է մերժված, եթե առաջարկը ստանալուց հետո՝ 90 օրվա ընթացքում, ոչ մի Մասնակից պետություն չի առարկում դրա մերժմանը:

ե) Եթե Գործադիր խորհրդի առաջարկը չի համապատասխանում "դ" կետով պահանջվող

ընդունման պայմաններին, առաջարկի, ներառյալ 7-րդ կետում նշված պահանջներին այդ առաջարկի համապատասխանության հարցի վերաբերյալ որոշումը Խորհրդաժողովի կողմից

որպես եական հարց դրվում է հաջորդ նստաշրջանին:

գ) Գլխավոր տնօրենը բոլոր Մասնակից պետություններին եւ ավանդապահին ծանուցում է սույն պարբերության համաձայն ընդունված ցանկացած որոշման մասին:

Ե) Սույն ընթացակարգով հավանության արժանացած փոփոխություններն ուժի մեջ են մտնում բոլոր Մասնակից պետությունների համար՝ այդ փոփոխություններին հավանություն տալու մասին Գլխավոր տնօրենի ծանուցագրից 180 օր հետո, եթե Գործադիր խորհրդի կողմից չի առաջարկվում կամ Խորհրդաժողովի կողմից չի որոշվում այլ ժամանակահատված:

### ՀՈՂՎԱԾ VIII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ

1. Եթե Մասնակից պետությունների մեծամասնության կողմից չի ընդունվում այլ որոշում, ապա սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո անցկացվում է Մասնակից պետությունների խորհրդաժողով սույն Պայմանագրի գործողությունը եւ արդյունավետությունը վերանայելու համար՝ Նախարարն իսկ դիմումունքում ու նպատակների եւ Պայմանագրի դրույթների իրազործման մեջ համոզվելու նպատակով: Նման վերանայումը հաշվի է առնում Պայմանագրին վերաբերող ցանկացած նոր գիտական կամ տեխնոլոգիական

գարգացում: Հիմնվելով ցանկացած Մասնակից պետության կողմից ներկայացված պահանջի

վրա՝ Վերանայման խորհրդաժողովը ընսարկում է խաղաղ նպատակներով ստորգետնյա միջուկային պայմանների անցկացման թույլտվության հնարավորությունը: Եթե Վերանայման խորհրդաժողովը կոնսենսուսով որոշում է, որ այդպիսի միջուկային պայմանները կարող են թույլատրվել, նա պետք է անհապաղ սկսի աշխատանքները՝ Մասնակից պետությունների կողմից նման միջուկային պայմաններից ռազմական օգուտներ քաղելու հնարավորությունը բացառող համապատասխան ուղղում հանձնարարելու նպատակով: Ցանկացած նման առաջարկված ուղղում փոխանցվում է Գլխավոր տնօրենին եւ քննարկվում է 7-րդ հոդվածի դրույթների համաձայն:

2. Այնուհետեւ՝ 10-ամյա ընդմիջումներով, հետագա Վերանայման խորհրդաժողովները կարող են գումարվել նույն նպատակով, եթե նախորդ տարվա խորհրդաժողովը որպես ընթացակարգային հարց որոշում ընդունի այդ մասին: Նման խորհրդաժողովներ կարող են գումարվել մինչեւ տասը տարի ընդմիջումներով, եթե խորհրդաժողովը անհրաժեշտ է համարում՝ ելեւով հարցի եական լինելուց:

3. Սովորաբ ցանկացած Վերանայման խորհրդաժողով անցկացվում է 2-րդ հոդվածով նախատեսված խորհրդաժողովի տարեկան հերթական նստաշրջանից հետո:

### ՀՈՂՎԱԾ IX. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԿՄԿԵՏԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԴՈՒՐ ԳՎԱԾ

1. Սույն Պայմանագրի ժամկետն անսահմանափակ է:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր ինքնիշխանությունն իրականացնելիս իրավունք ունի դուրս գալու սույն Պայմանագրից, եթե որոշում է, որ սույն Պայմանագրի բուն առարկային վերաբերող արտակարգ իրադարձությունները վտանգել են իր գերազույն շահերը:

3. Պայմանագրից դուրս գալը կատարվում է բոլոր Մասնակից պետություններին, Գործադիր խորհրդին, Ավանդապահին եւ Սիավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդին այդ մասին վեց ամիս առաջ ծանուցելով: Պայմանագրից դուրս գալու մասին ծանուցագիրը ներառում է իր ազգային շահերը վտանգող արտակարգ իրադարձության կամ իրադարձությունների մասին հայտարարություն:

### ՀՈՂՎԱԾ X. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԿԱՐԳՎԱԾՎԱԾ

Սույն Պայմանագրի Հավելվածները, Արձանագրությունը եւ դրա Հավելվածները կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն Պայմանագրի ցանկացած վկայակողում ներառում է սույն Պայմանագրի Հավելվածները, Արձանագրությունը եւ դրա Հավելվածները:

### ՀՈՂՎԱԾ XI. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Պայմանագիրը մինչեւ ուժի մեջ մտնելը բաց է բոլոր պետությունների ստորագրման համար:

### ՀՈՂՎԱԾ XII. ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման այն ստորագրած պետությունների կողմից՝ նրանց համապատասխան սահմանադրական ընթացակարգերին համաձայն:

### ՀՈՂՎԱԾ XIII. ՄԻԱՆԱԼԸ

Ցանկացած պետություն, որը չի ստորագրել սույն Պայմանագիրը մինչեւ ուժի մեջ մտնելը, կարող է հետագայում՝ ցանկացած ժամանակ, միանալ նրան:

### ՀՈՂՎԱԾ XIV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում սույն Պայմանագրի 2-րդ Հավելվածում թվարկված Մասնակից պետությունների կողմից վավերագրերը հանձնվելուց հետո, բայց ոչ մի դեպքում ոչ շուտ, քան երկու տարվա ընթացքում՝ այն ստորագրման համար բաց հայտարարելուց հետո:

2. Եթե սույն Պայմանագիրը դեռ ուժի մեջ չի մտել այն ստորագրման համար բաց հայտարարելու տարեդարձից երեք տարի հետո, ապա Ավանդապահը պետք է, վավերագրերը հանձնած պետությունների մեծամասնության պահանջով, գումարի այդ պետությունների խորհրդաժողովը: Այդ խորհրդաժողովը պետք է ուսումնասիրի, թե ինչ չափով է իրականացվել 1-ին կետում նշված պահանջը, եւ քննարկի ու կոնսենսուսով որոշի, թե միջազգային իրավունքին համապատասխան որ միջոցները կարող են ծեռնարկվել սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը սատարելու նպատակով վավերացման գործընթացը արագացնելու համար:

3. Եթե 2-րդ կետում նշված խորհրդաժողովի կամ նման այլ խորհրդաժողովի կողմից չի ընդունվում այլ որոշում, ապա այդ գործընթացը կրկնվում է սույն Պայմանագիրը ստորագրման համար բաց հայտարարելուն հաջորդող տարեդարձերին՝ մինչեւ դրա ուժի մեջ մտնելը:

4. Բոլոր ստորագրած պետությունները իրավիրվում են՝ մասնակցելու 2-րդ կետում, ինչպես նաև 3-րդ կետում նշված հետագա խորհրդաժողովներին՝ որպես դիտորդներ:

5. Այն պետությունների համար, որոնք վավերագրերը կամ միանալու փաստաթղթերն ի պահ են հանձնել սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, այն ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերը կամ միանալու փաստաթղթերն ի պահ հանձնելուց 30 օր հետո:

### ՀՈՂՎԱԾ XV. ՎԵՐԱՊԱՐՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրի հոդվածները եւ Հավելվածները ենթակա չեն վերապահումների: Սույն Պայմանագրի Արձանագրության եւ դրա Հավելվածների որույթները ենթակա չեն սույն Պայմանագրի առարկայի եւ նպատակի հետ անհամատեղելի վերապահումների:

### ՀՈՂՎԱԾ XVI. ԱՎԱՆԴԱԿՊԱՅ

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը հանդիսանում է սույն Պայմանագրի ավանդապահը եւ ստանում է ստորագրությունները, վավերագրերը եւ միանալու փաստաթղթերը:

2. Ավանդապահն անհապաղ տեղեկացնում է բոլոր ստորագրած պետություններին եւ միացած պետություններին յուրաքանչյուր ստորագրման, վավերագրի կամ միանալու մասին յուրաքանչյուր փաստաթղթի հանձնման, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու, ցանկացած ուղղման ու փոփոխության եւ ծանուցումների ստացման մասին:

3. Ավանդապահը սույն Պայմանագրի՝ պատշաճ կերպով վավերացված պատճեններն ուղարկում է այն ստորագրած պետությունների եւ դրան միացած պետությունների Կառավարություններին:

4. Սույն Պայմանագրին ավանդապահի կողմից գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն:

## ՀՐԴՎՈՅ ԽVII Հավասարազոր տեքստեր

Սույն Պայմանագիրը, որի արարերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

### ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎՈՅ 1

#### Պետությունների ցանկ՝ համաձայն 2-րդ հոդվածի 28-րդ կետի

##### Աֆրիկա

Ալժիր, Անգոլա, Բենին, Բոտսվանա, Բուրկինա Ֆասո, Բուրունդի, Կամերուն, Կապէ Վերդէ, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չադ, Կոմորներ, Կոնգո, Կոտ դ' Էվուար, Ջիբութի, Եգիպտոս, Հասարակածային Գվինեա, Էրիթրեա, Եթովպիա, Գարոն, Գամբիա, Գանա, Գվինեա, Գվինեա-Բիսաու, Ջենիա, Լեսոթո, Լիբերիա, Լիբիական Արաբական Զամահիրիա (հանրապետություն), Մադագասկար, Մալավի, Մալի, Մավրիտանիա, Մաուրիտիուս, Մարոկո, Մոզամբիկ, Նամիբիա, Նիգեր, Նիգերիա, Ռուանդա, Սառ Տոմե եւ Պրինսիպե, Սենեգալ, Սեյշելներ, Սիեռա Լեոնե, Սոմալի, Հարավային Աֆրիկա, Սուդան, Սվազիլենդ, Տոգո, Ռուսիա, Ռեգանդա, Տանզանիայի Միացյալ Հանրապետություն, Կոնգո, Չամբիա, Չիմբարվե:

##### Արեւելյան Եվրոպա

Ալբանիա, Հայաստան, Ադրբեյջան, Բելառուս, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Էստոնիա, Վրաստան, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիա, Սլովենիա, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն, Ուկրաինա, Հարավսլավիա:

##### Լատինական Ամերիկա եւ Կարիբյան ավագան

Անտիգուա եւ Բարբուդա, Վրատեստինա, Բահամսեր, Բարբադոս, Բելիզ, Բոլիվիա, Բրազիլիա, Չիլի, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Կուրա, Դոմինիկա, Դոմինիկայի Հանրապետություն, Էկվադոր, Ել Սալվադոր, Գրենադա, Գվատեմալա, Գյայանա, Հայիթի, Հոնդուրաս, Ճամայկա, Մեքսիկա, Նիկարագուա, Պանամա, Պարագվայ, Պերու, Սենտ Քիստ

Եւ Նելիս, Սենտ Լյուիսիա, Սենտ Վիլսենտ եւ Գրենադիներ, Սուլինամ, Տրինիդադ եւ Տոբագո, Ուրուգվայ, Վենեսուելա:

##### Մերձավոր Արեւելք եւ Հարավային Ասիա

Աֆղանստան, Բահրեյն, Բանգլադեշ, Բուտան, Հնդկաստան, Իրան (Իրանի Խոլամական Հանրապետություն), Իրաք, Իսրայել, Հորդանան, Ղազախստան, Թուվեյթ, Ղրղզստան, Լիբանան, Մալթիկան, Նեպալ, Օման, Պակիստան, Կատար, Սաուդյան Արաբիա, Շրի Լանկա, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Տաջիկստան, Թուրքմենստան, Սիացյալ Արաբական Էմիրություններ, Ուզբեկստան, Եմեն:

### Հյուսիսային Ամերիկա եւ Արեւմտյան Եվրոպա

Անդորրա, Ավստրիա, Բելգիա, Կանադա, Կիպրոս, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Վատիկան, Խվանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լիխտենշտայն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոնակո, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Սան Մարինո, Իսպանիա, Շվեյչիա, Շվեյցարիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Սիացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

### Հարավարեւելյան Ասիա, Խաղաղ Օվկիանիա եւ Հեռավոր Արեւելք

Ավստրալիա, Բրունեյ Դարուսսալամ, Կամբոջա, Չինաստան, Կուկի Կղզիներ, Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն, Ֆիջի, Ինդոնեզիա, Ճապոնիա, Ջիրիբատի, Լաոսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն, Մալյազիա, Մարշայան Կղզիներ, Միկրոնեզիա (Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ), Մոնղոլիա, Մյանմար, Նաուրու, Նոր Զելանդիա, Շիուե, Պալաու, Պապուա-Նոր Գվինեա, Ֆիլիպիններ, Կորեայի Հանրապետություն, Սամոա, Սինգապուր, Սողոմոնի Կղզիներ, Թաիլանդ, Տոնգա, Տուվալու, Վանուատու, Վիետնամ:

### ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ 2

#### ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆԿ՝ ՀԱՄԱԴԱՅՆ 14-ՐԴ ԻՆԴՎԱԾԻ

1996թ. հունիսի 18-ի դրությամբ՝ Զինաթափման խորհրդաժողովի Մասնակից պետությունների գանկ, որոնք պաշտոնապես մասնակցել են խորհրդաժողովի 1996թ. նստաշրջանի աշխատանքներին եւ հիշատակված են Առողմային էներգիայի միջազգային գործակալության "Աշխարհի միջուկային էլեկտրակայաններ"՝ 1996թ. ապրիլի հրատարակության 1-ին առյուսակում, եւ 1996թ. հունիսի 18-ի դրությամբ՝ Զինաթափման խորհրդաժողովի Մասնակից պետությունների գանկ, որոնք պաշտոնապես մասնակցել են խորհրդաժողովի 1996թ. նստաշրջանի աշխատանքներին եւ հիշատակված են Առողմային էներգիայի միջազգային գործակալության "Աշխարհի միջուկային էլեկտրակայաններ"՝ 1995թ. ապրիլի հրատարակության 1-ին առյուսակում:

Ալժիր, Արգենտինա, Ավստրալիա, Ավստրիա, Բանգլադեշ, Բելգիա, Բրազիլիա, Բրունեյ, Կանադա, Չիլի, Չինաստան, Կոլումբիա, Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն, Եգիպտոս, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունագարիա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իրան, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Մեքսիկա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պակիստան, Պերու, Լեհաստան, Ռումինիա, Կորեայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիա, Հարավային Աֆրիկա, Իսպանիա, Շվեյչիա, Շվեյցարիա, Թուրքիա, Ուկրաինա, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Վիետնամ, Կոնգ:

### ՄԻԶՈՒԿԱՅԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՐԳԵԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### ՄԱՍ I

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻԶՈՒԿԱՅԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԻԶՈՒԿԱՅԻ  
ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅՑԱՆԵՐԸ

## Ա. Ընդհանուր դրույթներ

1. Դիտարկման միջազգային համակարգը բաղկացած է 4-րդ հոդվածի 16-րդ կետում նշված դիտարկող սարքավորումներից եւ հաղորդակցության համապատասխան միջոցներից:

2. Դիտարկման միջազգային համակարգի մեջ համակցված դիտարկող սարքավորումները բաղկացած են Արձանագրության 1-ին Յավելվածում նշված սարքավորումներից: Դիտարկման միջազգային համակարգը պետք է համապատասխանի գործարկման համապատասխան ձեռնարկներում նշված տեխնիկական եւ գործարկման պահանջներին:

3. Կազմակերպությունը, 2-րդ հոդվածի համաձայն, պետք է, համագործակցելով եւ խորհրդակցելով Մասնակից պետությունների, այլ պետությունների եւ համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, հիմնի եւ համակարգի Դիտարկման միջազգային համակարգի գործունեությունը եւ գործարկումը, Դիտարկման միջազգային համակարգի հետագա յուրաքանչյուր համաձայնեցված փոփոխությունը կամ զարգացումը:

4. Համաձայն համապատասխան համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների եւ

ընթացակարգերի՝ Մասնակից պետությունը կամ Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումները ստացող կամ այլ կերպ նրանց համար պատասխանատվություն ստանձնող

այլ պետությունը եւ Տեխնիկական քարտուղարությունը պայմանավորվում եւ համագործակցում են այդպիսի Մասնակից պետության կամ այլ պետության իրավասության

կամ վերահսկողության ներքո գտնվող տարածքներում կամ միջազգային իրավունքի համաձայն որեւէ այլ տեղ գտնվող դիտարկող սարքավորումների, նրանց վերաբերող՝ վկայագրված լաբորատորիաների եւ համապատասխան կապի միջոցների ստեղծման, գործարկման, արդիականացման, ֆինանսավորման եւ սպասարկման գործում: Այդպիսի համագործակցությունն իրագործվում է անվտանգության եւ նույնականացման վերաբերյալ պահանջների եւ համապատասխան Գործարկման ձեռնարկներում պարունակվող

տեխնիկական մասնագրերի համաձայն: Այդպիսի պետությունն իրավունք է տրամադրում Տեխնիկական քարտուղարությանը սարքավորումների եւ հաղորդակցման կապերի ստուգման

նպատակով մոտենալ դիտարկող սարքավորմանը եւ համաձայնում է սարքավորումների ու գործարկման ընթացակարգերի մեջ անհրաժեշտ փոփոխություններ մտցնել համաձայնեցված

պահանջները բավարարելու նպատակով: Տեխնիկական քարտուղարությունն այդպիսի պետություններին տրամադրում է համապատասխան տեխնիկական օգնություն, որը, գործադիր խորհրդի կարծիքով, անհրաժեշտ է Դիտարկման միջազգային համակարգի կազմում սարքավորման պատշաճ կերպով գործելու համար:

5. Կազմակերպության եւ Մասնակից պետությունների կամ Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումներն ստացող կամ այլ կերպ դրանց համար պատասխանատվություն ստանձնող պետությունների միջեւ այդպիսի համագործակցության

պայմանները պետք է շարադրված լինեն յուրաքանչյուր առանձին դեպքին համապատասխանող համաձայնագրերում կամ պայմանավորվածություններում:

## Բ. Երկրաշարժաբանական դիտարկում

6. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պարտավորվում է համագործակցել Երկրաշարժաբանական տվյալների միջազգային փոխանակման գործում՝ սույն Պայմանագրի

համապատասխանության վերահսկողությանը աջակցելու նպատակով: Այդ

համագործակցությունը ներառում է Երկրաշարժաբանական դիտարկման հիմնական եւ օժանդակ կայանների գլոբալ ցանցի ստեղծումը եւ գործարկումը: Այդ կայանները, համաձայնեցված ընթացակարգերի համաձայն, տվյալներ են տրամադրում Տվյալների միջազգային կենտրոնին:

7. Հիմնական կայանների ցանցը բաղկացած է սույն Արձանագրության 1-ին Հավելվածի 1.Ա այլուսակում նշված 50 կայաններից: Այդ կայանները համապատասխանում են Երկրաշարժաբանական դիտարկման եւ Երկրաշարժաբանական տվյալների միջազգային փոխանակման Գործարկման ձեռնարկում նշված տեխնիկական եւ

գործարկման պայմաններին: Հիմնական կայաններից անընդհատ ստացվող տվյալներն անմիջականորեն կամ տվյալների ազգային կենտրոնի միջոցով ուղիղ միացման ռեժիմով փոխանցվում են Տվյալների միջազգային կենտրոնին:

8. Ի լրումն առաջնային ցանցի՝ 120 կայաններից բաղկացած օժանդակ ցանցը հարցման դեպքում անմիջականորեն կամ Տվյալների ազգային կենտրոնի միջոցով տեղեկատվություն է փոխանցում Տվյալների միջազգային կենտրոնին: Օգտագործման ենթակա օժանդակ կայանները թվարկված են սույն Արձանագրության 1-ին Հավելվածի 1.Բ Այլուսակում: Օժանդակ կայանները համապատասխանում են Երկրաշարժաբանական դիտարկման եւ Երկրաշարժաբանական տվյալների միջազգային փոխանակման Գործարկման

ձեռնարկում նշված տեխնիկական եւ գործարկման պահանջներին: Օժանդակ կայաններից տվյալները կարող են ցանկացած ժամանակ պահանջվել Տվյալների միջազգային կենտրոնին:

Կողմից եւ անհապաղ տրամադրվել ուղիղ միացման ռեժիմով՝ համակարգչային կապի միջոցով:

#### 4. Ռադիոնուկլիդային դիտարկում

9. Յուրաքանչյուր Մասնակից պետություն սույն Պայմանագրին համապատասխանության վերահսկողությանն աջակցելու նպատակով պարտավորվում է համագործակցել մթնոլորտում ռադիոնուկլիդների մասին տվյալների միջազգային փոխանակման գործում: Այդ համագործակցությունը ներառում է ռադիոնուկլիդային դիտարկող կայանների եւ վկայագրված լաբորատորիաների գլոբալ ցանցի ստեղծումը եւ գործարկումը: Այդ ցանցը, համաձայնեցված ընթացակարգերի համաձայն, տվյալներ է տրամադրում Տվյալների միջազգային կենտրոնին:

10. Մթնոլորտում ռադիոնուկլիդների չափման կայանների ցանցը պետք է կազմի 80 կայաններից բաղկացած ընդհանուր ցանց, ինչպես նշված է սույն Արձանագրության 1-ին Հավելված 2.Ա այլուսակում: Բոլոր կայանները պետք է ունակ լինեն իրականացնելու մթնոլորտում համապատասխան մասնիկների առկայության դիտարկում: Այդ կայաններից 40-ը պետք է նաեւ ունակ լինեն սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուն պես իրականացնելու համապատասխան ազնիվ գագերի առկայության դիտարկում:

Այդ նպատակով խորհրդաժողովն իր նախնական նիստում հաստատում է Նախապատրաստական հանձնաժողովի առաջարկությունն այն մասին, թե Արձանագրության 1-ին Հավելվածի 2.Ա այլուսակի 40 կայաններից որոնք են ունակ իրականացնելու ազնիվ գագերի դիտարկում: Իր առաջին հերթական ամենամյա նիստում խորհրդաժողովը ընսարկում եւ ընդունում է ամբողջ ցանցով ազնիվ գագերի դիտարկման հնարավորությունների իրագործման ծրագիրը: Գլխավոր տնօրենը խորհրդաժողովի համար պատրաստում է այդպիսի իրագործման ընթացակարգերի մասին գեկույց: Բոլոր դիտարկումային կայանները համապատասխանում են Ռադիոնուկլիդային դիտարկման եւ ռադիոնուկլիդային տվյալների միջազգային փոխանակման Գործարկման ձեռնարկում նշված տեխնիկական եւ

գործարկման պահանջներին:

#### 11. Ռադիոնուկլիդային դիտարկման կայանների ցանցն օժանդակվում է

լաբորատորիաների կողմից, որոնք պետք է վկայագրվեն Տեխնիկական քարտուղարության կողմից՝ համապատասխան Գործարկման ձեռնարկի համաձայն իրագործման համար, Կազմակերպության հետ ունեցած պայմանագրի եւ սպասարկման վճարունակության հիման

վրա, ռադիոնուկլիդային դիտարկման կայաններից փորձանմուշների վերլուծության համար: Սույն Արձանագրության 1-ին Հավելվածի 2.Բ այլուսակում նշված եւ պատշաճ կերպով սարքավորված լաբորատորիաները Տեխնիկական քարտուղարության կողմից ներգրավվում են ռադիոնուկլիդային դիտարկող կայաններից փորձանմուշների լրացուցիչ վերլուծության գործում: Գործադիր խորհրդի համաձայնությամբ

Տեխնիկական քարտուղարությունն անհրաժեշտության դեպքում կարող է վկայագրել լրացուցիչ լաբորատորիաներ՝ դիտարկող ոչ ինքնավար կայաններից փորձանմուշների ընթացիկ վերլուծություն անցկացնելու համար: Բոլոր վկայագրված լաբորատորիաներն այդպիսի վերլուծության արդյունքները տրամադրում են Տվյալների միջազգային կենտրոնին՝ այդ անելիս իրագործելով Ռադիոնուկլիդային դիտարկման եւ ռադիոնուկլիդային տվյալների միջազգային փոխանակման Գործարկման ձեռնարկում նշված տեխնիկական եւ գործարկման պահանջները:

## Դ. Հիդրոձայնագիտական դիտարկում

12. Յուրաքանչյուր Մասնակից պետություն սույն Պայմանագրին համապատասխանության վերահսկողության աջակցելու նպատակով պարտավորվում է համագործակցել հիդրոձայնագիտական տվյալների միջազգային փոխանակման գործում: Այդ համագործակցությունը ներառում է հիդրոձայնագիտական դիտարկման գլոբալ ցանցի ստեղծումը եւ գործարկումը: Այդ կայանները, համաձայնեցված ընթացակարգերի համաձայն, տվյալներ են տրամադրում Տվյալների միջազգային կենտրոնին:

13. Հիդրոձայնագիտական կայանների ցանցը բաղկացած է սույն Արձանագրության 1-ին Հավելվածի 3-րդ առյուսակում նշված կայաններից եւ կազմում է 6 հիդրոֆոնային եւ 5 T-ֆազային կայանների ընդհանուր ցանց: Այդ կայանները կատարում են Հիդրոձայնագիտական դիտարկման եւ հիդրոձայնագիտական տվյալների միջազգային փոխանակման Գործարկման ձեռնարկում նշված տեխնիկական եւ գործարկման պահանջները:

## Ե. Ենթաձայնային դիտարկում

14. Յուրաքանչյուր Մասնակից պետություն սույն Պայմանագրին համապատասխանության վերահսկողության աջակցելու նպատակով պարտավորվում է համագործակցել Ենթաձայնային տվյալների միջազգային փոխանակման գործում: Այդ համագործակցությունը ներառում է Ենթաձայնային դիտարկման կայանների գլոբալ ցանցի ստեղծումը եւ գործարկումը: Այդ կայանները, համաձայնեցված ընթացակարգերի համաձայն, տվյալներ են տրամադրում Տվյալների միջազգային կենտրոնին:

15. Ենթաձայնային կայանների ցանցը բաղկացած է սույն Արձանագրության 1-ին Հավելվածի 4-րդ առյուսակում նշված կայաններից եւ կազմում է 60 կայաններից բաղկացած ընդհանուր ցանց: Այդ կայանները կատարում են Ենթաձայնային դիտարկման եւ Ենթաձայնային տվյալների միջազգային փոխանակման Գործարկման ձեռնարկում նշված տեխնիկական եւ գործարկման պահանջները:

## Զ. Տվյալների միջազգային կենտրոնի գործառույթները

16. Տվյալների միջազգային կենտրոնն իրականացնում է Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումներից տվյալների ստացումը, հավաքումը, մշակումը, վերլուծությունը, հաշվետվությունը եւ արխիվացումը, ներառյալ վկայագրված լաբորատորիաներում անցկացվող վերլուծության արդյունքները:

## 17. Ընթացակարգերը եւ իրադարձությունների ընտրության ստանդարտ

չափանիշները, որոնք օգտագործվելու Են Տվյալների միջազգային կենտրոնի կողմից համաձայնեցված գործառությունները կատարելիս, մասնավորապես ստանդարտ հաշվետու արդյունքների արտադրության Եւ Մասնակից պետություններին ծառայությունների ստանդարտ տեսակակազմ տրամադրելու վերաբերյալ, մշակվում Եւ աստիճանաբար զարգացվում Են Տվյալների միջազգային կենտրոնի Գործարկման ձեռնարկում: Նախապատրաստական հանձնաժողովի կողմից նախապես մշակված ընթացակարգերն ու չափանիշները նախապես հավանության Են արժանանում Խորհրդաժողովի կողմից՝ նրա նախնական նիստում:

Տվյալների միջազգային կենտրոնի ստանդարտ արդյունքներ

18. Տվյալների միջազգային կենտրոնն ընթացիկ հիմունքներով Դիտարկման միջազգային համակարգի նախնական տվյալների նկատմամբ պետք է կիրառի ավտոմատ մշակման մեթոդներ Եւ ինտերակտիվ մարդկային վերլուծություն՝ բոլոր Մասնակից պետությունների անունից Տվյալների միջազգային կենտրոնի ստանդարտ արդյունքների արտադրության Եւ արհիշտական նպատակով: Այդ արդյունքները Մասնակից պետություններին տրամադրվում Են անվճար Եւ չեն վնասում որեւէ իրադարձության ընույթի վերաբերյալ վերջնական եզրակացությունները, որոնք շարունակում Են մնալ Մասնակից պետությունների պարտականությունը, Եւ ներառում Են.

ա) Դիտարկման միջազգային համակարգի կողմից հայտնաբերված բոլոր ազդանշանների ամբողջացված ցանկերը, ինչպես նաև ստանդարտ իրադարձությունների ցանկերը Եւ տեղեկագրերը, ներառյալ Տվյալների միջազգային կենտրոնի կողմից տեղայնացված յուրաքանչյուր իրադարձության համար հաշվարկված արժեքները Եւ զուգորդվող անորոշությունները՝ հիմնված ստանդարտ չափանիշների հավաքագմի վրա,

բ) ընտրված իրադարձությունների ստանդարտ տեղեկագրերը, որոնք հանդիսանում Են Տվյալների միջազգային կենտրոնի կողմից յուրաքանչյուր իրադարձության նկատմամբ իրադարձությունների գտման ստանդարտ չափանիշների կիրառման արդյունք՝

սույն Արձանագրության 2-րդ Հավելվածում մատևանշված՝ ընորոշման չափորոշիչների օգտագործմամբ, նպատակ ունենալով իրադարձությունների ստանդարտ տեղեկագրում բնորոշել, առանձնացնել Եւ գտել այն իրադարձությունները, որոնք համարվում Են համատեղելի բնական երեւությների հետ կամ ոչ միջուկային, մարդածին երեւությների հետ: Իրադարձությունների ստանդարտ տեղեկագրերը յուրաքանչյուր իրադարձության վերաբերյալ պետք է թվայնորեն նշեն, թե որքանով է տվյալ իրադարձությունը համապատասխանում կամ որքանով չի համապատասխանում իրադարձությունների գտման

չափանիշներին: Իրադարձությունների ստանդարտ գտում կիրառելիս Տվյալների միջազգային կենտրոնն օգտագործում է գտման ինչպես գլոբալ, այնպես Էլ լրացուցիչ չափանիշները՝ կիրառելիության դեպքում հաշվի առնելով տարածաշրջանային տարրերությունները: Դիտարկման միջազգային համակարգի գործարկման փորձ կուտակելուն զուգընթաց Տվյալների միջազգային կենտրոնն աստիճանաբար ընդլայնում է իր տեխնիկական հնարավորությունները,

գ) Տվյալների միջազգային կենտրոնի կողմից ստացված Եւ արհիշտական տվյալները, Տվյալների միջազգային կենտրոնի արդյունքները, ինչպես նաև Դիտարկման միջազգային համակարգի Եւ Տվյալների միջազգային կենտրոնի արդյունավետությունն ու գործարկման վիճակն ընդհանրացնող ամփոփումները, Եւ

դ) Տվյալների միջազգային կենտրոնի ստանդարտ արտադրանքի՝ "ա"-ից "գ" կետերում մատևանշված քաղաքացները կամ Ենթահավաքակազմերը՝ ընտրված առանձին Մասնակից պետության հարցումով:

19. Տվյալների միջազգային կենտրոնը կազմակերպության կամ Մասնակից պետության կողմից հարցման դեպքում Մասնակից պետությունների համար անվճար անցկացնում Է Դիտարկման միջազգային համակարգի տվյալների փորձագիտական վերլուծության միջոցով խորացված տեխնիկական տեսություն ապահովելու համար հատուկ հետազոտություններ՝ ազդանշանների Եւ իրադարձությունների ստանդարտ

չափորոշիչների հաշվարկային արժեքների ճշտման նպատակով:

Տվյալների միջազգային կենտրոնի կողմից Մասնակից պետություններին տրամադրում է բաց, հավասար, ժամանակին եւ հարմար հասանելիության իրավունք Դիտարկման միջազգային համակարգի՝ չմշակված կամ մշակված բոլոր տվյալներին, Տվյալների միջազգային կենտրոնի բոլոր արդյունքներին եւ Տվյալների միջազգային կենտրոնի արխիվում գտնվող՝ Դիտարկման միջազգային համակարգի բոլոր այլ տվյալներին կամ Տվյալների միջազգային կենտրոնի միջոցով՝ Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումների տվյալներին: Տվյալներին մուտքի իրավունքի ապահովման եւ տվյալների տրամադրման մեթոդները ներառում են հետեւյալ ծառայությունները.

ա) Մասնակից պետության կողմից Տվյալների միջազգային կենտրոնի բոլոր արդյունքների ավտոմատ եւ կանոնավոր փոխանցում Մասնակից պետությանը կամ այդ արդյունքների փոխանցում տվյալ պետության ընտրությամբ, եւ, եթե պահանջվում է, Դիտարկման միջազգային համակարգի արդյունքների փոխանցում Մասնակից պետությանը

կամ դրանց փոխանցում տվյալ պետության ընտրությամբ,

բ) Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումներից եւ Տվյալների միջազգային կենտրոնի արխիվներից, ի պատասխան Մասնակից պետությունների հատուկ

հայցերի, տվյալների եւ արդյունքների ստացում, ներառյալ Էլեկտրոնային մուտքը Տվյալների միջազգային կենտրոն,

գ) Առանձին Մասնակից պետություններին օգնության ցուցաբերում՝ նրանց հայցով եւ անվճար՝ առանց մեծ ճիգեր գործադրելու, Դիտարկման միջազգային կենտրոնի տվյալների եւ հայց ներկայացնող Մասնակից պետության կողմից տրամադրված այլ համապատասխան տվյալների փորձագիտական տեխնիկական վերլուծության օգտագործմամբ՝

կոնկրետ երեւությունների սկզբնադրյուրների ինքնությունը պարզելու գործում համապատասխան Մասնակից պետությանն օգնություն ցուցաբերելու նպատակով: Այդպիսի

տեխնիկական ցանկացած վերլուծության արդյունք համարվում է հայց ներկայացնող Մասնակից պետության արդյունք, սակայն մատչելի է բոլոր Մասնակից պետություններին:

Տվյալների միջազգային կենտրոնի՝ "ա" եւ "բ" Ենթակետերում նշված ծառայություններին անվճար տրամադրվում են յուրաքանչյուր Մասնակից պետության: Տվյալների ծավալն ու ծերացափը մատնանշվում են Տվյալների միջազգային կենտրոնի Գործարկման ծեռնարկում:

Իրադարձությունների ազգային գտում

21. Մասնակից պետության հարցման դեպքում Տվյալների միջազգային կենտրոնն իր ստանդարտ արդյունքներից յուրաքանչյուրի նկատմամբ ինքնաբերաբար կամ կանոնավոր կերպով կիրառում է այդ Մասնակից պետության կողմից հաստատված իրադարձությունների գտման ազգային չափանիշները եւ այդ Մասնակից պետության է տրամադրում այդպիսի վերլուծության արդյունքները: Հայց ներկայացնող Մասնակից պետության համար այդ ծառայությունն ապահովվում է անվճար: Իրադարձությունների ազգային գտման այդպիսի գործընթացների արդյունքները համարվում են հայց ներկայացնող Մասնակից պետության արդյունք:

Տեխնիկական օգնություն

22. Տվյալների միջազգային կենտրոնը անհրաժեշտության դեպքում տեխնիկական օգնություն է ցուցաբերում առանձին Մասնակից պետություններին.

ա) տվյալների եւ արդյունքների ընտրման ու գտման նրանց պահանջների ձեւակերպման գործում,  
բ) Տվյալների միջազգային կենտրոնի Գործարկման ձեռնարկում չընդգրկված ազդանշանների եւ երեւոյթների նոր չափորոշիչները հաշվարկելու նպատակով հայց ներկայացնող Մասնակից պետության կողմից տրամադրված համակարգչային ալգորիթմները  
եւ ծրագրային միջոցները Տվյալների միջազգային կենտրոնում առանց մեծ ճիգեր պահանջներով՝ անվճար այդպիսի պետության համար ներդնելու միջոցով. ընդ որում՝ արդյունքները համարվում են հայց ներկայացնող Մասնակից պետության արդյունքներ,  
եւ

գ) Տվյալների ազգային կենտրոնում Դիտարկման միջազգային համակարգի տվյալների ստացման, մշակման եւ վերլուծության բնագավառում հնարավորությունների գորգացման գործում Մասնակից պետություններին աջակցություն ցուցաբերելու միջոցներ:

23. Տվյալների միջազգային կենտրոնը շարունակաբար դիտարկում է Դիտարկման միջազգային համակարգի սարքավորումների գործարկման կարգավիճակը, կապի միջոցները, իր սեփական մշակման համակարգերը եւ հաշվետվություններ է ներկայացնում դրա վերաբերյալ: Այն դեպքում, եթե ցանկացած բաղադրամասի գործարկման կատարումը չի համապատասխանում Գործարկման ձեռնարկում շարադրված համաձայնեցված մակարդակներին, նա այդ մասին անհապաղ ծանուցում է պատասխանատվություն կրողներին:

---

## ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

### ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՎՊԱՐՓԱԿ ԱՐԳԵԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (3-րդ մաս)

#### ՄԱՍ II ՏԵՂՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

##### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն մասում նշված ընթացակարգերն իրագործվում են 4-րդ հոդվածում նշված՝ տեղում տեսչական ստուգումների անցկացման դրույթներին համաձայն:
- Տեղում տեսչական ստուգում անցկացվում է այն տարածքում, որտեղ տեղի է ունեցել տեղում տեսչական ստուգման հայց հրահրած հրադարձությունը:
- Տեղում անցկացվող տեսչական ստուգման տարածքը պետք է հանդիսանա մի ամբողջություն, եւ դրա չափը չափելու դերազանցի 1,000 քառակուսի կիլոմետրը: Գծային հեռավորությունը ցանկացած ուղղությամբ չպետք է գերազանցի 50 կիլոմետրը:
- Տեղում անցկացվող տեսչական ստուգման տետրությունը չպետք է գերազանցի 60 օրը՝ սկսած 4-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն տեղում անցկացվող տեսչական ստուգման վերաբերյալ հարցմանը հավասնություն տալու օրվանից, սակայն, 4-րդ հոդվածի 49-րդ կետի համաձայն, կարող է երկարաձգվել առավելագույնը մինչեւ 70 օր:
- Եթե տեսչական ստուգման մասնատում նշված տեսչական ստուգման տարածքի մեջ մտնում են ավելի քան մեկ Մասնակից պետության իրավասության կամ վերահսկողության ներքո գտնվող տարածքներ կամ այլ վայրեր, ապա տեղում տեսչական ստուգումներ անցկացնելու վերաբերյալ դրույթները համապատասխանության դեպքում կիրավում են Մասնակից պետություններից յուրաքանչյուրի նկատմամբ, որի տարածքում անցկացվում

Ե տեսչական ստուգումը:

6. Այն դեպքերում, եթե տեսչական ստուգման շրջանը գտնվում է տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության իրավասության կամ վերահսկողության ներքո, սակայն գտնվում է այլ Մասնակից պետության տարածքում, կամ եթե մուտքի կետից դեպի տեսչական ստուգման շրջան մուտքի իրավունքը պահանջում է տարանցել տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետություն չհանդիսացող այլ Մասնակից պետության տարածքը, տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը այդպիսի

տեսչական ստուգումների վերաբերյալ իր իրավունքները կենսագործում եւ պարտավորությունները կատարում եւ սույն Արձանագրության համաձայն: Այդ դեպքերում այն Մասնակից պետությունը, որի տարածքում գտնվում է տեսչական ստուգման շրջանը, դյուրացնում է տեսչական ստուգման անցկացումը եւ ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն, որպեսզի տեսչական թիմը իր առաջադրանքները կարողանա կատարել ժամանակին եւ արդյունավետորեն: Մասնակից պետությունները, որոնց տարածքով պահանջում է տարանցում տեսչական շրջան հասնելու համար, պետք է դյուրացնեն այդպիսի տարանցումը:

7. Այն դեպքերում, եթե տեսչական ստուգման շրջանը գտնվում է տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության իրավասության կամ վերահսկողության ներքո, սակայն գտնվում է սույն Պայմանագրի Մասնակից չհանդիսացող պետության տարածքում, տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի տեսչական ստուգումն անցկացվի սույն Արձանագրության համաձայն: Սույն Պայմանագրի Մասնակից չհանդիսացող պետության տարածքում իր իրավասության կամ վերահսկողության ներքո մեկ կամ ավելի շրջաններ ունեցող Մասնակից պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի այն պետությունը, որի տարածքում գտնվում է տեսչական ստուգման շրջանը, ընդունի տվյալ Մասնակից պետության համար նշանակված տեսուչներին եւ տեսուչների օգնականներին: Եթե տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունն ի վիճակի

չէ ապահովելու մուտքի իրավունքը, ապա նա պետք է ցույց տա, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները մուտքի իրավունքն ապահովելու համար:

8. Այն դեպքերում, եթե տեսչական ստուգման շրջանը գտնվում է սույն Պայմանագրի Մասնակից չհանդիսացող պետության իրավասության կամ վերահսկողության ներքո, սակայն գտնվում է Մասնակից պետության տարածքում, Մասնակից պետությունը, առանց վնասելու միջազգային իրավունքների նորմերը եւ պրակտիկան, ձեռնարկում է տեսչական ստուգման ենթակա Մասնակից պետությունից եւ այն Մասնակից պետությունից, որի տարածքում գտնվում է տեսչական ստուգման շրջանը, պահանջող բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սույն Արձանագրության համաձայն տեղում տեսչական ստուգման անցկացումն ապահովելու նպատակով: Եթե Մասնակից պետությունն ի վիճակի

չէ ապահովելու մուտքը տեսչական ստուգման շրջան, նա պետք է ցույց տա, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները մուտքի իրավունքն ապահովելու համար՝ առանց վնասելու միջազգային իրավունքի նորմերը եւ պրակտիկան:

9. Տեսչական թիմի թվակազմը հասցվում է տեսչական ստուգման մանդատի պատշաճ կատարման համար անհրաժեշտ նվազագույնին: Տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից

պետության տարածքում ցանկացած պահի, բացառությամբ հորատման անցկացման ժամանակաշրջանի, գտնվող տեսչական թիմի անդամների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 40-ը: Հայց ներկայացնող Մասնակից պետության կամ տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության քաղաքացին չպետք է հանդիսանա տեսչական թիմի անդամ:

10. Գլխավոր տևորենը որոշում է տեսչական թիմի թվակազմը եւ ընտրում է նրա անդամներին տեսուչների եւ տեսուչների օգնականների ցուցակից՝ հաշվի առնելով կոնկրետ հայցի հանգամանքները:

11. Տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունն ապահովում է

տեսչական թիմի համար անհրաժեշտ այնպիսի հարմարությունների կազմակերպումը, ինչպիսիք են կապի միջոցները, թարգմանչական ծառայությունները, փոխադրամիջոցները, աշխատանքային եւ բնակելի տարածքները, սնունդը եւ բժշկական սպասարկումը:

12. Տեսչական ստուգման ավարտից ընդունելի կարճ ժամկետից հետո Կազմակերպությունը բավականին կարճ ժամանակահատվածում փոխատուցում է տեսչական

ստուգման ենթարկված Մասնակից պետության՝ Նրա տարածքում տեսչական թիմի գոտինելու

Եւ ֆուլսկցիոնալ գործունեության հետ կապված բոլոր ծախսերը, Ներառյալ 11-րդ եւ 49-րդ կետերում հիշատակված ծախսերը:

13. Տեղում տեսչական ստուգման իրականացման ընթացակարգերը մանրամասն նշվում են Տեղում տեսչական ստուգման անցկացման վերաբերյալ Գործարկման ձեռնարկում:

## Բ. ՄՇՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսուչների եւ տեսուչների օգնականների նշանակում

14. Տեսչական թիմը կարող է բաղկացած լինել տեսուչներից եւ տեսուչների օգնականներից: Տեղում տեսչական ստուգումը անցկացվում է միայն այդ գործառույթի կատարման համար հատուկ նշանակված արհեստավարժ տեսուչների կողմից: Նրանց կարող

են օգնել հատուկ նշանակված տեսուչների օգնականները, այնպիսիք, ինչպիսիք են տեխնիկական եւ վարչական անձնակազմը, օդանավի անձնակազմը եւ թարգմանիչները:

15. Տեսուչների եւ տեսուչների օգնականների թեկնածություններու առաջադրվում են Մասնակից պետությունների կողմից կամ, Տեխնիկական քարտուղարության աշխատակազմի դեպքում, Գլխավոր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով տեղում տեսչական ստուգումների նպատակների եւ գործառույթների վերաբերյալ նրանց հատուկ փորձաքննությունը եւ փորձը: Նրանց թեկնածությունները նախօրոք հավանության են արժանանում Մասնակից պետությունների կողմից՝ 18-րդ կետի համաձայն:

16. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր համար սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 30 օր հետո Գլխավոր տնօրենին ծանուցում է տվյալ Մասնակից պետության կողմից որպես տեսուչներ եւ տեսուչների օգնականներ առաջարկվող անձանց ազգանունները, ծննդյան թվերը, սեռը, աստիճանները, որակավորման եւ մասնագիտական փորձը:

17. Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 60 օր հետո Տեխնիկական քարտուղարությունը գրավոր հայտնում է բոլոր Մասնակից պետություններին Գլխավոր տնօրենի եւ Մասնակից պետությունների կողմից նշանակման համար առաջարկվող տեսուչների եւ տեսուչների օգնականների նախնական ցուցակը՝ նշելով նրանց ազգանունները, քաղաքացիությունը, ծննդյան թվերը, սեռը եւ աստիճանները, ինչպես նաև նրանց որակավորման եւ մասնագիտական փորձի վերաբերյալ տվյալները:

18. Յուրաքանչյուր Մասնակից պետություն անհապաղ հաստատում է նշանակման համար առաջարկվող տեսուչների եւ տեսուչների օգնականների նախնական ցուցակի ստացումը: Այդ ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր տեսուչ կամ տեսուչի օգնական համարվում է ընդունված, եթե միայն Մասնակից պետությունը ցուցակի ստացումը հաստատելուց ոչ ուշ, քան 30 օր հետո գրավոր չի հայտնում իր համար նրա անընդունելիության մասին: Մասնակից պետությունը կարող է նշել մերժման պատճառը: Անընդունելիության դեպքում առաջարկված տեսուչը կամ տեսուչի օգնականը չի գրադաւում եւ չի մասնակցում իր անընդունելիության մասին հայտարարած Մասնակից պետության տարածքում կամ նրա իրավասության կամ վերահսկողության ներքո գտնվող տարածքում անցկացվող՝ տեսչական ստուգմանն առնչվող գործունեությանը:

Տեխնիկական

քարտուղարությունն անհապաղ հաստատում է մերժման վերաբերյալ ծանուցման

ստացումը:

19. Ամեն անգամ, երբ Գլխավոր տնօրենը կամ Մասնակից պետությունն առաջարկում է լրացումներ կամ փոփոխություններ կատարել տեսուչների եւ տեսուչների օգնականների ցուցակում, փոխարինող տեսուչները եւ տեսուչների օգնականները նշանակվում են այն նույն կարգով, որը կիրառվում է նախնական ցուցակի նկատմամբ: Յուրաքանչյուր Մասնակից պետություն անհապաղ ծանուցում է Տեխնիկական քարտուղարությանը, եթե իր կողմից առաջարկված տեսուչը կամ տեսուչի օգնականն այլեւս չի կարող կատարել տեսուչների եւ տեսուչների օգնականի պարտականությունները:

20. Տեխնիկական քարտուղարությունը նորացնում է տեսուչների եւ տեսուչների օգնականների ցուցակը եւ բոլոր Մասնակից պետություններին ծանուցում է ցուցակում յուրաքանչյուր լրացման կամ փոփոխության մասին:

21. Տեղում տեսչական ստուգման հայց ներկայացնող Մասնակից պետությունը կարող է առաջարկել, որ տեսուչների կամ տեսուչների օգնականների ցուցակից որեւէ տեսուչ հանդես գա որպես իր դիտորդ՝ 4-րդ հոդվածի 61-րդ կետի համաձայն:

22. 23-րդ կետի պայմանով՝ Մասնակից պետությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ մերժելու արդեն ընդունած տեսուչին կամ տեսուչի օգնականին: Նա պետք է գրավոր ծանուցի Տեխնիկական քարտուղարության իր մերժման մասին եւ կարող է նշել մերժման պատճառը: Այդպիսի մերժումը սկսում է գործել ծանուցումը Տեխնիկական քարտուղարության ստանալուց 30 օր հետո: Տեխնիկական քարտուղարությունն անհապաղ հաստատում է մերժման վերաբերյալ ծանուցման ստացումը եւ տեղեկացնում մերժող եւ առաջարդող կողմից պետություններին այն օրվա մասին, որից սկսած տեսուչը կամ տեսուչի օգնականը դադարում է հանդիսանալ այդ Մասնակից պետության համար նշանակված:

23. Տեսչական ստուգման վերաբերյալ տեղեկացված Մասնակից պետությունը չի ձգտում տեսչական թիմից հեռացնել տեսչական ստուգման մանդատում հիշատակված ցանկացած տեսուչի օգնականի:

24. Մասնակից պետության կողմից ընդունված տեսուչների եւ տեսուչների օգնականների թվաքանակը պետք է բավարար լինի տեսուչների եւ տեսուչների օգնականների համապատասխան թվաքանակի առկայությունը ապահովելու համար: Եթե, Գլխավոր տնօրենի կարծիքով, առաջարկված տեսուչների եւ տեսուչների օգնականների անընդունելիությունը Մասնակից պետության կողմից խոչընդոտում է տեսուչների եւ տեսուչների օգնականների բավարար թվաքանակի նշանակմանը կամ այլ կերպ դժվարացնում է տեղում տեսչական ստուգման նպատակների արդյունավետ կատարումը, Գլխավոր տնօրենը հարցը փոխանցում է Գործադիր խորհրդին:

25. Տեսուչների եւ տեսուչների օգնականների ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր տեսուչ անցնում է համապատասխան վերապատրաստում: Այդպիսի վերապատրաստումն ապահովում է Տեխնիկական քարտուղարության կողմից՝ համաձայն

Տեղում անցկացվող տեսչական ստուգումների վերաբերյալ Գործարկման ձեռնարկում նշված ընթացակարգերի: Մասնակից պետությունների հետ համաձայնեցնելով՝ Տեխնիկական քարտուղարությունը համակարգում է տեսուչների վերապատրաստման ժամանակացույցը:

Վրտունություններ եւ անձեռնմխելիություններ

26. 18-րդ կետում նախատեսված կամ հետազայում 19-րդ կետի համաձայն փոփոխված՝ տեսուչների կամ տեսուչների օգնականների նախնական ցուցակի ընդունումից հետո յուրաքանչյուր Մասնակից պետությունն պարտավոր է իր ազգային ընթացակարգերի համաձայն եւ տեսուչի կամ տեսուչի օգնականի միջնորդությամբ տրամադրել բազմակի մուտքի/ելքի եւ/կամ տարանցիկ արտոնագրեր եւ այլ համապատասխան փաստաթղթեր, որոնք թույլ կտան ցանկացած տեսուչի կամ տեսուչի օգնականի մուտք գործել այդ Մասնակից պետության տարածք եւ գտնվել այնտեղ բացառապես տեսչական գործունեություն իրականացնելու համար: Յուրաքանչյուր

Մասնակից պետություն պետք է այդ նպատակի համար անհրաժեշտ մուտքի արտոնագրեր

կամ ուղետորության փաստաթղթեր պատրաստի միջնորդությունը ստանալուց ոչ ուշ, քան 48 ժամ հետո կամ Մասնակից պետության տարածքում գտնվող մուտքի կետ տեսչական թիմի ժամանելուն պես: Այդպիսի փաստաթղթերը վավերական են համարվում այնքան ժամանակ, ինչքան դա անհրաժեշտ է բացառապես տեսչական գործունեություն իրականացնելու նպատակով տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության տարածքում տեսուչի կամ տեսուչի օգնականի գտնվելու համար:

27. Տեսչական թիմի անդամների կողմից նրանց գործառությունների արդյունավետ կատարման համար նրանց շնորհվում են "ա"- "թ" ենթակետերում նշված արտոնություններն ու անձեռնմխելիությունները: Արտոնություններն ու անձեռնմխելիությունները շնորհվում են տեսչական թիմի անդամներին սույն Պայմանագրի շահերից ելնելով, այլ ոչ թե այդ անձանց անձնական օգուտի համար: Այդպիսի արտոնություններն ու անձեռնմխելիությունները նրանց շնորհվում են տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության տարածք ժամանելու պահից մինչեւ այդ տարածքից մեկնելու ընկած ամբողջ ժամանակամիջոցում եւ այսուհետեւ՝ նախկինում նրանց պաշտոնական գործառությունների կատարման հետ կապված գործողությունների առնչությամբ:

ա) Տեսչական թիմի անդամներն օգտվում են նույն անձեռնմխելիությունից, ինչ դիվանագիտական գործակալները՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին 1961թ.

ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն:

թ) Սույն Պայմանագրի համաձայն՝ տեսչական գործունեությունն իրականացնող տեսչական թիմի կողմից զբաղեցված քակելի եւ ծառայողական հաստատությունները օգտվում են նույն անձեռնմխելիությունից եւ պահպանությունից, ինչ դիվանագիտական գործակալները՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Տեխնիկական քարտուղարության հետ հարաբերությունների համար տեսչական թիմն իրավունք ունի օգտագործելու ծածկագրեր:

ի) Տեսչական թիմի անդամների կողմից տեղափոխվող փորձանմուշները եւ հաստատված սարքավորումները օգտվում են անձեռնմխելիությունից, սույն Պայմանագրի դրույթներից ելնելով, եւ ազատվում են բոլոր մաքսային տուրքերից: Վտանգավոր փորձանմուշների փոխադրումը կատարվում է համապատասխան կանոնակարգերի համաձայն:

ե) Տեսչական թիմի անդամներին շնորհվում են նույնպիսի անձեռնմխելիություններ, ինչպիսիք շնորհվում են դիվանագիտական գործակալներին՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն:

զ) Սույն Պայմանագրով նախատեսված գործունեությունն իրականացնող տեսչական թիմի անդամներն ազատվում են այն տուրքերից եւ հարկերից, որոնցից ազատվում են դիվանագիտական գործակալները՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն:

է) Տեսչական թիմի անդամներին թույլատրվում է տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության տարածք առանց որեւէ մաքսատուրքի կամ դրա հետ կապված գանձման վճարման ներմուծել անձնական օգտագործման իրեր՝ բացառությամբ այն իրերի, որոնց ներմուծումը կամ արտահանումը արգելվում է օրենքով կամ կարգավորվում է կարանտինային կանոններով:

ը) Տեսչական թիմի անդամներին շնորհվում են դրամի եւ տարադրամի փոխանակման վերաբերյալ այն նույն արտոնությունները, որոնք շնորհվում են ժամանակավոր ծառայողական գործուղման մեջ գտնվող օտարերկրյա կառավարությունների

## Ներկայացուցիչներին, Եւ

թ) Տեսչական թիմի անդամները տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության տարածքում չաետք է գրաղվեն որեւէ մասնագիտական կամ առեւտրային գործունեությամբ անձնական օգուտի և նպատակներով:

28. Տեսչական ստուգման չենթարկվող Մասնակից պետությունների տարածքները տարանցելիս տեսչական թիմի անդամներին շնորհվում են այն նույն արտոնություններն ու անձեռնմխելիությունները, որոնք տրամադրվում են դիվանագիտական գործակալներին՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի 40-րդ հոդված 1-ին կետի համաձայն: Թղթերը եւ գրագրությունը, Ներառյալ գրառումները, ինչպես նաև Նրանց կողմից տեղափոխվող փորձանմուշները եւ հաստատված սարքավորումները օգտվում են 27.գ եւ դ կետերում նշված արտոնություններից ու անձեռնմխելիություններից:

29. Առանց վնասելու իրենց արտոնություններն ու անձեռնմխելիությունները՝ տեսչական թիմի անդամները պարտավոր են հարգել տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության օրենքներն ու կանոնակարգերը եւ, այնքանով, որքանով դա համապատասխանում է տեսչական ստուգման մանդատին, պարտավոր են չմիջամտել այդ պետության ներքին գործերին: Եթե տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը համարում է, որ տեղի է ունեցել սույն Արձանագրության մեջ նշված արտոնությունների ու անձեռնմխելիությունների չարաշահում, Մասնակից պետության եւ Գլխավոր տնօրենի միջեւ անցկացվում են խորհրդակցություններ՝ նպատակ ունենալով պարզել, թե արդյոք տեղի է ունեցել այդպիսի չարաշահում, եւ այդպիսի փաստի հաստատման դեպքում՝ կանխարգելել այդպիսի չարաշահման կրկնությունը:

30. Գլխավոր տնօրենը տեսչական թիմի անդամներին կարող է գրկել շնորհված անձեռնմխելիությունից այն դեպքում, եթե, Գլխավոր տնօրենի կարծիքով, այդ անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, եւ դրանից կարելի է հրաժարվել՝ առանց վնասելու սույն Պայմանագրի դրույթների իրագործումը: Հրաժարումը միշտ պետք է լինի որոշակիորեն հատակ:

31. Դիտորդներին շնորհվում են այն նույն արտոնություններն ու անձեռնմխելիությունները, ինչպիսիք տրամադրվում են տեսչական թիմի անդամներին՝ սույն բաժնից ելելով, բացառությամբ 27.դ կետի համաձայն շնորհված արտոնությունների ու անձեռնմխելիությունների:

## Մուտքի կետեր

32. Յուրաքանչյուր Մասնակից պետություն նշանակում է իր մուտքի կետերը եւ պահանջվող տեղեկատվությունը տրամադրում է Տեխնիկական քարտուղարությանը իր համար սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 30 օր հետո: Այդ մուտքի կետերը նշանակվում են այնպես, որ տեսչական խումբը առնվազն մեկ մուտքի կետից կարողանա հասնել ցանկացած տեսչական ստուգման վայր 24 ժամվա ընթացքում: Տեխնիկական քարտուղարությունը բոլոր Մասնակից պետություններին հայտնում է մուտքի կետերի տեղակայման մասին: Մուտքի կետերը կարող են նաև ծառայել որպես ելքի կետեր:

33. Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է փոփոխել իր մուտքի կետերը՝ այդպիսի փոփոխությունների մասին ծանուցելով Տեխնիկական քարտուղարությանը: Փոփոխությունները սկսում են գործել այդպիսի ծանուցումը Տեխնիկական քարտուղարության ստանալուց 30 օր հետո՝ բոլոր Կողմ պետություններին համապատասխան ծանուցումն ապահովելու համար:

34. Եթե Տեխնիկական քարտուղարությունը գտնում է, որ տեսչական ստուգումները ժամանակին անցկացնելու համար մուտքի կետերը բավարար չեն, կամ Մասնակից պետության կողմից առաջարկվող մուտքի կետերի փոփոխությունը դժվարացնում է տեսչական ստուգումների ժամանակին անցկացնելը, ևս խորհրդակցություններ է սկսում համապատասխան Մասնակից պետությունների հետ՝ ինչպիսի լուծելու նպատակով:

Պայմանագրով պատճենաբանություններ ոչ չերթային օդանավերի օգտագործման վերաբերյալ

35. Երբ չվերթային առեւտրային ուղիներով հնարավոր չէ ժամանակին հասնել մուտքի կետ, տեսչական խումբը կարող է օգտագործել ոչ չվերթային օդանավ։ Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր համար սովո՞ն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 30 օր հետո Տեխնիկական քարտուղարությանը տեղեկացնում է տեսչական խումբը եւ տեսչական ստուգման համար անհրաժեշտ սարքավորումները տեղափոխող ոչ չվերթային օդանավի համար դիվանագիտական թույլտվության համարի մասին։ Ավիացիոն երթուղիները պետք է անցնեն գործող միջազգային օդային մայրուղիներով, որոնք պետք է համաձայնեցվեն Մասնակից պետության եւ Տեխնիկական քարտուղարության միջեւ՝ որպես հիմք այդպիսի դիվանագիտական թույլտվության տրամադրման համար։

#### Տեսչական ստուգման հաստատված սարքավորումները

36. Խորհրդաժողովն իր նախնական նիստում քննարկում եւ հաստատում է տեղում անցկացվող տեսչական ստուգման ընթացքում օգտագործվող սարքավորումների ցանկը։ Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է հանդես գալ ցանկում սարքավորումների ներառման վերաբերյալ առաջարկով։ Սարքավորումների օգտագործման առանձնահատկությունները, ինչպես դրանք մանրամասն նշված են Տեղում տեսչական ստուգումների անցկացման վերաբերյալ Գործարկման ձեռնարկում, հաշվի են առնում անվտանգության եւ խորհրդապահության նկատառումները այն դեպքերում, երբ հնարավոր է այդպիսի սարքավորումների օգտագործումը։

37. Տեղում անցկացվող տեսչական ստուգման ընթացքում օգտագործելու համար նախատեսված սարքավորումները բաղկացած են տեսչական գործունեության եւ 69-րդ կետում նշված տեխնիկական մեթոդների համար նախատեսված հիմնական սարքավորումներից եւ տեղում տեսչական ստուգման ժամանակին եւ արդյունավետ անցկացնելու համար նախատեսված օժանդակ սարքավորումներից։

38. Երբ պահանջվում է, Տեխնիկական քարտուղարությունն ապահովում է տեղում անցկացվող տեսչական ստուգման համար նախատեսված հաստատված սարքավորումների բոլոր տեսակների առկայությունը։ Երբ տեղում տեսչական ստուգման անցկացման համար պահանջվում է, Տեխնիկական քարտուղարությունը պետք է պատշաճորեն հավաստի, որ սարքավորումները տրամաչափավորված, պահպանված եւ պաշտպանված են։ Տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության կողմից մուտքի կետում սարքավորումների ստուգմանն աջակցելու նպատակով Տեխնիկական քարտուղարությունը տրամադրում է փաստաթղթեր եւ կնքում է դրանք՝ այդ հավաստումը նույնականացնելու նպատակով։

39. Մշտապես պահպող յուրաքանչյուր սարքավորում գտնվում է Տեխնիկական քարտուղարության հոգածության ներքո։ Տեխնիկական քարտուղարությունը պատասխանատու է այդ սարքավորումների պահպանման եւ տրամաչափավորման համար։

40. Համապատասխան դեպքերում Տեխնիկական քարտուղարությունը պայմանավորվածություններ է ձեռք բերում Մասնակից պետությունների հետ ցանկում ընդգրկված սարքավորումների տրամադրման կապակցությամբ։ Այդ Մասնակից պետությունները պատասխանատու են այդպիսի սարքավորումների պահպանման եւ տրամաչափավորման համար։

#### 4. ՏԵՂՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՅՑԸ, ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍՆԱՑԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒԸ

##### Տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը

41. 4-րդ հոդվածի 37-րդ կետի համաձայն՝ տեղում տեսչական ստուգում անցկացնելու հայցը պարունակում է առևկազն հետեւյալ տեղեկատվությունը։  
ա) հայցը հրահրած իրադարձության տեղակայման գնահատված աշխարհագրական եւ

ուղղահայաց կորոդինատները՝ սխալի հևարավոր սահմանի նշումով,

թ) քարտեզի վրա նշված եւ 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն տեսչական ստուգման ենթարկվող տարածքի առաջարկվող սահմանները,

զ) տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը կամ Մասնակից պետությունները կամ նշումն այն բանի մասին, որ տեսչական ստուգման ենթարկվող տարածքը կամ դրա մի մասը չեն գտնվում որեւէ պետության իրավասության կամ վերահսկողության շրջանակում,

ո) հայցը հրահրած իրադարձության հավանական միջավայրը,

ե) հացը հրահրած իրադարձության գնահատված ժամանակը՝ սխալի հևարավոր սահմանի նշումով,

զ) այն բոլոր տվյալները, որոնց վրա հիմնված է հարցումը,

ե) առաջարկվող դիտորդի, վերջինիս առկայության դեպքում, անհատական տվյալները, եւ

թ) 4-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդակցությունների եւ պարզաբանումների գործնթացի արդյունքները կամ, համապատասխան դեպքում, խորհրդակցությունների եւ պարզաբանումների գործնթացը չկայանալու պատճառների բացատրությունը:

#### Տեսչական ստուգման մանդատը

42. Տեղանքում տեսչական ստուգման մանդատը ներառում է.

ա) Գործադիր խորհրդի որոշումը տեղանքում տեսչական ստուգում անցկացնելու հայցի վերաբերյալ,

թ) Մասնակից պետության կամ Մասնակից պետությունների անվանումները, որոնք պետք է տեսչական ստուգման ենթարկվեն, կամ նշում այն բանի մասին, որ տեսչական ստուգման ենթարկվող տարածքը կամ դրա մի մասը չեն գտնվում որեւէ պետության իրավասության կամ հսկողության ներքո,

զ) տեսչական ստուգման տարածքի գտնվելու վայրը եւ սահմանները՝ քարտեզի վրա նշված, հաշվի առնելով այն ամբողջ տեղեկատվությունը, որի վրա հիմնված է հայցը, եւ այլ ամբողջ մատչելի տեխնիկական տեղեկատվությունը՝ հայց ներկայացնող Մասնակից պետության հետ խորհրդակցելով,

ո) տեսչական ստուգման տարածքում տեսչական թիմի գործունեության ծրագրված տեսակները,

ե) տեսչական թիմի կողմից օգտագործվելիք մուտքի կետը,

զ) ցանկացած համապատասխան տարանցիկ կամ հիմնական կետը,

ե) տեսչական թիմի դեկավարի անունը,

ը) տեսչական թիմի անդամների անունները,

թ) առաջարկված դիտորդի անունը. վերջինիս առկայության դեպքում, եւ

ժ) տեսչական ստուգման տարածքում օգտագործվելիք սարքավորումների ցուցակը:

Եթե Գործադիր խորհրդի՝ 4-րդ հոդվածի 46-49-րդ կետերի համաձայն ընդունած որոշումն առաջացնի տեսչական ստուգման մանդատի փոփոխության անհրաժեշտություն, Գլխավոր տնօրենը կարող է համապատասխան վերանայման ենթարկել մանդատը "դ", "ը" եւ "ժ" ենթակետերի կապակցությամբ: Գլխավոր տնօրենը տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությանը անհապաղ ծանուցում է այդպիսի փոփոխության մասին:

#### Տեսչական ստուգման մասին ծանուցումը

43. Գլխավոր տնօրենի կողմից՝ 4-րդ հոդվածի 55-րդ կետի համաձայն արված ծանուցումը ներառում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա) տեսչական ստուգման մանդատը,

թ) մուտքի կետ տեսչական թիմի ժամանման ամսաթիվն ու նախատեսվող ժամանակը,

զ) մուտքի կետ ժամանելու միջոցները,

ո) անհրաժեշտության դեպքում՝ ցուցակներում տեղ չգտած օդանավի համար հաստատված դիվանագիտական արտոնագրի համարը, եւ

ե) բոլոր սարքավորումների ցուցակը, որը Գլխավոր տնօրենը տեսչական ստուգման

Ենթարկվող Մասնակից պետությանը հայցում է մատչելի դարձնել տեսչական թիմին՝ տեսչական ստուգման տարածքում օգտագործելու համար:

44. Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը հաստատում է Գլխավոր տնօրենի կողմից ծանուցման ստացումը ոչ ուշ, քան ծանուցումը ստանալուց 12 ժամ հետո:

#### Դ. Նախատեսչական գործունեություն

Մուտք տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության տարածք, գործողությունները մուտքի կետում եւ անցումը տեսչական ստուգման վայր

45. Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը, որին ծանուցել են տեսչական թիմի ժամանման մասին, անհապաղ ապահովում է տեսչական թիմի մուտքը իր տարածքը:

46. Երբ դեպի մուտքի կետ գնալու համար օգտագործվում է ոչ չփառագույն օդանավ, Տեխնիկական քարտուղարությունը Ազգային իշխանության միջոցով տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությանը տրամադրում է թռիչքի ծրագիրը՝ օդանավի

թռիչքի համար Մասնակից պետության օդային տարածք մտնելուց առաջ վերջին թռիչքադաշտից, ոչ ուշ, քան այդ թռիչքադաշտից դեպի մուտքի կետ դրա նախատեսված մեկնումից վեց ժամ առաջ: Այդպիսի ծրագիրն արձանագրվում է Սիցազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության ընթացակարգի համաձայն կիրառելի քաղաքացիական օդանավի համար: Տեխնիկական քարտուղարությունը թռիչքի ծրագրի նշումների բաժնում ներառում է հաստատված դիվանագիտական արտոնագրի համարը եւ համապատասխան ծանուցումը՝ նշելով օդանավի՝ որպես տեսչական ստուգման օդանավ լինելու փաստը: Եթե օգտագործվում է ռազմական օդանավ, Տեխնիկական քարտուղարությունը տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունից նախապես

խնդրում է լիազորագիր նրա օդային տարածք մտնելու համար:

47. Ոչ ուշ, քան տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության օդային տարածք մտնելուց երեք ժամ առաջ, վերջին թռիչքադաշտից տեսչական թիմի նախատեսված

մեկնումից առաջ, տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունն ապահովում է 46-րդ կետի համաձայն գրանցված թռիչքի պահանջման այնպես, որ տեսչական թիմը կարողանա ժամանել մուտքի կետ մինչեւ ժամանման նախատեսված ժամանակը:

48. Անհրաժեշտության դեպքում տեսչական թիմի դեկավարը եւ տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության ներկայացուցիչը համաձայնեցնում են սկզբնակետը եւ թռիչքի ծրագիրը՝ մուտքի կետից դեպի սկզբնակետ եւ, անհրաժեշտության դեպքում, դեպի տեսչական ստուգման վայր:

49. Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունն ապահովում կամ կազմակերպում է ավտոկանգառ, անվտանգության պահպանություն, ծառայություններ եւ վառելիք, ինչպես պահանջվել է Տեխնիկական քարտուղարության կողմից, մուտքի կետում տեսչական թիմի օդանավի համար եւ, անհրաժեշտության դեպքում, սկզբնակետում ու տեսչական ստուգման վայրում: Այդպիսի օդանավը չի Ենթարկվում վայրէջք կատարելու վարձի, մեկնումի հարկի եւ նմանատիպ վճարների: Այս կետը կիրառվում է նաեւ այնպիսի օդանավի նկատմամբ, որն օգտագործվել է տեղում տեսչական ստուգման անցկացման ընթացքում տեղանքի վրայով իրացվող թռիչքների համար:

50. 51-րդ կետի պայմանով՝ տեսչական ստուգման մանդատին համապատասխան՝ Մասնակից պետության տարածք հաստատված սարքավորում բերելու կամ, Պայմանագրին եւ

նրա Արձանագրության պայմաններին համաձայն, դրա օգտագործման հարցում տեսչական

ստուգման Ենթարկվող Մասնակից պետության կողմից տեսչական թիմի նկատմամբ սահմանափակումներ չեն կիրառվում:

51. Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունն իրավունք ունի, առանց խախտելու 54-րդ կետում նշված ժամանակահատվածը, մուտքի կետում տեսչական

թիմի անդամների ներկայությամբ ստուգել սարքավորման հաստատումն ու վկայագրումը՝ 38-րդ կետի համաձայն: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը կարող է մերժել այն սարքավորումները, որոնք չեն համապատասխանում տեսչական ստուգման մանդատին կամ չեն հաստատվել եւ վկայագրվել 38-րդ կետի համաձայն:

52. Մուտքի կետ ժամանելուց անմիջապես հետո եւ առանց խախտելու 54-րդ կետում նշված ժամանակահատվածը տեսչական թիմի ղեկավարը ներկայացնում է տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության ներկայացուցչին տեսչական թիմի կողմից պատրաստված տեսչական ստուգման մանդատն ու տեսչական ստուգման նախնական ծրագիրը՝

մատնանշելով դրա կողմից իրականացվելիք գործողությունները: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության ներկայացուցիչները հակիրճ տեղեկություններ են տալիս տեսչական թիմին քարտեզների եւ այլ համապատասխան փաստաթղթերի օգնությամբ:

Հակիրճ տեղեկացումը ներառում է առևվող բնական տարածքի հատկանիշները, անվտանգության եւ գաղտնիության հարցերը եւ տեսչական ստուգման համար տարածքի տրամադրման բնույթի պայմանավորվածությունները: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը մատնանշում է տեսչական ստուգման տարածքում գտնվող այն տեղանքները, որոնք, իր կարծիքով, չեն առնչվում տեսչական ստուգման նպատակին:

53. Նախատեսչական հակիրճ ճեպագրույցից հետո տեսչական թիմը, ընդունված կարգի համաձայն, փոփոխում է տեսչական ստուգման նախնական պլանը՝ հաշվի առնելով

տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության կողմից արված ցանկացած դիտողություն: Տեսչական ստուգման փոփոխված պլանը մատչելի է դառնում տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության ներկայացուցչին:

54. Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը իր ուժերի սահմաններում անում է ամեն ինչ՝ տեսչական թիմին աջակցելու եւ նրա անվտանգ գործունեությունն ապահովելու, 50-րդ եւ 51-րդ կետերում նշված հաստատված սարքավորման եւ ուղերենի անվտանգ տեղափոխումը մուտքի կետից դեպի տեսչական ստուգման տեղը ոչ ուշ, քան մուտքի կետ ժամանելուց 36 ժամ հետո ապահովելու համար, եթե այլ ժամանակահատված համաձայնցված չէ 57-րդ կետում:

55. Հաստատելու համար, որ այն տեղը, ուր տեսչական թիմը փոխադրվել է, համապատասխանում է տեսչական ստուգման մանդատում նշված տեսչական ստուգման վայրին, տեսչական թիմն ունի տեղանք գտնող հաստատված սարքավորումը օգտագործելու իրավունք: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունն օգնում է տեսչական թիմին այս գործում:

## Ե. Տեսչական ստուգման անցկացումը

### Ընդհանուր կանոններ

56. Տեսչական ստուգման թիմը կատարում է իր գործառույթները Պայմանագրի եւ սույն Արձանագրության դրույթների համաձայն:

57. Տեսչական թիմն սկսում է իր տեսչական գործունեությունը տեսչական ստուգման վայրում հնարավորին չափ շուտ, բայց ոչ մի դեպքում ոչ ուշ, քան մուտքի կետ ժամանելուց 72 ժամ հետո:

58. Տեսչական թիմի գործողությունները կազմակերպվում են այնպես, որ ապահովվի գործառույթների ժամանակին եւ արդյունավետ կատարումը եւ հնարավորինս նվազագույն անհարմարություն պատճառվի տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությանը եւ տեսչական ստուգման վայրին:

59. Ոյն դեպքերում, երբ տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությանը

43. Ե կետի համաձայն կամ տեսչական ստուգման ընթացքում ներկայացվել է տեսչական ստուգման վայրում տեսչական թիմի կողմից օգտագործվելիք ցանկացած սարքավորում մատչելի դարձնելու հայց, տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը պետք է հնարավորին չափ կատարի այդ հայցի պահանջները:

60. Տեղանքում տեսչական ստուգման ընթացքում տեսչական թիմն, այդ թվում, ուսի.

ա) իրավունք՝ որոշելու, թե ինչպես կանցկացվի տեսչական ստուգման՝ տեսչական ստուգման մանդատին համապատասխան եւ հաշվի առնելով տեսչական ստուգման ենթարկվող

Մասնակից պետության ցանկացած քայլ, որը ձեռնարկվել է կառավարվող մուտքի վերաբերյալ պայմաններին համապատասխան,

բ) անհրաժեշտության դեպքում տեսչական ստուգման ծրագիրը փոփոխելու իրավունք՝ տեսչական ստուգման արդյունավետ իրականացման համար,

գ) տեսչական ստուգման ծրագրի վերաբերյալ տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության առաջարկներն ու առաջարկված փոփոխությունները հաշվի առնելու

պարտավորություն,

դ) տեսչական ստուգման ընթացքում ծագած հարցերի կապակցությամբ պարզաբանումներ խնդրելու իրավունք,

ե) միայն 69-րդ կետում նշված տեխնիկական միջոցների օգտագործման եւ տեսչական ստուգման նպատակին չառնչվող գործողություններից ձեռնպահ մևալու պարտավորություն: Թիմը հավաքում եւ փաստագրում է տեսչական ստուգման նպատակին

առնչվող փաստեր, սակայն չի որոնում եւ չի փաստագրում դրան հստակորեն չառնչվող տեղեկություններ: Ցանկացած հավաքված եւ հետագայում հայտնաբերված չառնչվող նյութ վերադարձվում է տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությանը,

զ) տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության դիտարկման ազգային ցանցերից եւ այլ աղբյուրներից տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության կողմից տրամադրվող՝ հայցը հրահրած հրադարձության բնույթի վերաբերյալ բացատրությունները եւ տվյալները հաշվի առնելու եւ հաշվետվության մեջ ներառելու պարտավորություն,

ե) տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության հայցի դեպքում այդ պետությանը տեսչական ստուգման վայրում հավաքված տեղեկությունների եւ տվյալների պատճենները տրամադրելու պարտավորություն, եւ

ը) տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության՝ գաղտնիության, անվտանգության ու առողջապահության վերաբերյալ կանոնները հարգելու պարտավորություն:

61. Տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը տեղում անցկացվող տեսչական ստուգման ընթացքում, այդ թվում, ուսի.

ա) ցանկացած պահի տեսչական թիմին տեսչական ստուգման ծրագրի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու իրավունք,

բ) տեսչական թիմի հետ կապը պահպանելու նպատակով ներկայացնելու հատկացնելու իրավունք եւ պարտավորություն,

զ) տեսչական թիմին նրա պարտականությունների կատարման ընթացքում ուղեկցելու եւ տեսչական իմքի կողմից հրականացվող գործողություններին հետեւելու նպատակով ներկայացնելու ունենալու իրավունք: Սա չպետք է հետաձգի կամ որեւէ այլ կերպ խանգարի տեսչական թիմի կողմից գործառույթների կատարմանը,

դ) տեսչական ստուգման առնչվող լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու եւ լրացուցիչ փաստերի հավաքում եւ փաստագրում խնդրելու իրավունք, որոնք, իր կարծիքով, առնչվում են տեսչական ստուգմանը,

ե) տեսչական ստուգման նպատակին չառնչվող գգայուն բնույթի տեղեկություններ հաղորդող բոլոր լուսանկարչական եւ չափման արդյունքները, ինչպես նաև փորձանմուշները թնալու եւ ցանկացած լուսանկար կամ դրա մասեր վերցնելու եւ իրեն պահելու իրավունք. տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը պետք է իրավունք ունենա ստանալու բոլոր լուսանկարչական եւ չափման արդյունքների

կրկնօրինակները: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունն իրավունք ունի վերցնելու լուսանկարչական բնօրինակները եւ առաջին սերնդի լուսանկարչական արդյունքները եւ լուսանկարները կամ դրանց մասերը համատեղ կնքել իր տարածքում: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունն իրավունք ունի իր սեփական տեսահցիկի օպերատորին հնարավորություն տալ նկարահանել անշարժ տեսանյութեր եւ լուսանկարներ՝ տեսչական թիմի խնդրանքի դեպքում: Այլապես այդ գործառույթներն իրականացվում են տեսչական թիմի անդամների կողմից,

զ) տեսչական թիմին իր դիտարկման ազգային ցանցերից եւ այլ սկզբնաղբյուրներից հայցը հրահրած իրադարձության բնույթի վերաբերյալ տվյալներ եւ բացատրություններ տրամադրելու իրավունք,

է) տեսչական թիմին տեսչական ստուգման ընթացքում ծագող ցանկացած հարցի լուծման համար անհրաժեշտ պարզաբանում տրամադրելու պարտավորություն:

### Հաղորդակցություն

62. Տեսչական թիմի անդամներն իրավունք ունեն տեղում տեսչական ստուգում անցկացնելու ամբողջ ընթացքում հաղորդակցվելու միմյանց եւ Տեխնիկական քարտուղարության հետ: Այդ նպատակով նրանք տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության համաձայնությամբ կարող են օգտագործել իրենց սեփական՝ սահմանված կարգի համաձայն հաստատված եւ վկայագրված սարքավորումն այն չափով, որքանով տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը նրանց չի պահպում մուտք դեպի հեռահաղորդակցության այլ միջոցներ:

### Դիտորդ

63. 4-րդ հոդվածի 61-րդ կետի համաձայն՝ տեսչական թիմի ժամանումից հետո՝ ընդունելի ժամկետում, հայց ներկայացնող Մասնակից պետությունը կապվում է Տեխնիկական քարտուղարության հետ՝ համակարգելու համար դիտորդի ժամանումը մուտքի այն նույն կետը կամ սկզբնակետը, որտեղ ժամանում է տեսչական թիմը:

64. Դիտորդն իրավունք ունի տեսչական ստուգման ողջ ընթացքում՝ հաղորդակցվելու տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունում գտնվող՝ հայց ներկայացնող Մասնակից պետության դեսպանության հետ կամ, դեսպանության բացակայության դեպքում, իր՝ հայց ներկայացնող Մասնակից պետության հետ:

65. Դիտորդն իրավունք ունի ժամանելու տեսչական ստուգման վայր եւ մուտք ունենալու դեպի տեսչական ստուգման վայր տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից

պետության թույլտվությամբ:

66. Դիտորդն իրավունք ունի առաջարկներ ներկայացնելու տեսչական թիմին տեսչական ստուգման ամբողջ ընթացքում:

67. Տեսչական ստուգման ընթացքում տեսչական թիմը դիտորդին տեղեկացված է պահում տեսչական ստուգման անցկացման եւ հայտնաբերված արդյունքների մասին:

68. Տեսչական ստուգման ընթացքում տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետությունը դիտորդին ապահովում է անհրաժեշտ նույն հարմարություններով կամ կազմակերպում է դրանց ապահովումը, որոնցից օգտվում է տեսչական թիմը՝ 11-րդ կետի համաձայն: Տեսչական ստուգման Ենթարկվող Մասնակից պետության տարածքում դիտորդի մևալու հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հայց ներկայացնող Մասնակից պետությունը:

### Տեսչական ստուգման գործողությունները եւ մեթոդները

69. Կառավարվող մուտքի, փորձանմուշների հավաքման, տնօրինման ու վերլուծության եւ տեղանքի վրայով իրականացվող թռիչքների վերաբերյալ դրույթների համաձայն՝ կարող են անցկացվել հետեւյալ տեսչական գործողությունները եւ

օգտագործվել հետեւյալ տեխնիկական միջոցները.

ա) օդից եւ գետնի մակերեւույթից որոշել դիրք՝ տեսչական ստուգման տեղի սահմանների եւ այնտեղ կոռորդիսատների հաստատման համար՝ որպես աշակեցություն տեսչական ստուգման գործողություններին,

բ) տեսողական դիտարկում, վիդեո ու անշարժ լուսանկարչություն եւ բազմասպեկտր պատկերում, ներառյալ ենթակարմիր չափումները գետնի մակերեւույթի վրա եւ դրա տակ, եւ օդից՝ անկանոնություններ եւ անբնական փաստեր որոնելու համար,

գ) մակերեւույթից վերեւ կամ ներքեւ ճառագայթաակտիվության մակարդակների չափումներ, օգտագործելով գամմա ճառագայթման վերահսկողությունը եւ Էներգիայի լուծման վերլուծությունը օդից, մակերեւույթի վրա եւ նրա տակ անկանոնություններ հայտնաբերելու եւ ճանաչելու համար,

դ) շրջակա միջավայրի փորձանմուշների հավաքում եւ մակերեւույթի վերեւից, վրայից եւ ներքեւից պինդ մարմինների, հեղուկների եւ գազերի վերլուծություն՝ անկանոնություններ երեւան հանելու նպատակով,

ե) հետցցումների պասիվ սեյսմոլոգիական դիտարկում՝ տեղայնացնելու համար որոնման վայրն ու դյուրացնելու համար իրադարձության բնույթի սահմանումը,

զ) ռեզոնանսի սեյսմաչափում եւ ակտիվ սեյսմիկ փորձաքննություն՝ որոնելու եւ տեղայնացնելու համար ստորգետնյա անկանոնությունները՝ ներառյալ խոռոչներն ու մանրաքարային գոտիները,

ե) մագնիսական եւ ճգոնական դաշտի քարտեզագրում, գետին թափանցող՝ ռադարային եւ էլեկտրահաղորդականության անհրաժեշտ չափումներ մակերեւույթի վրա եւ օդից՝ երեւան հանելու համար անկանոնությունները կամ անբնական փաստերը, եւ

ը) գայլիկոնով անցքի բացում՝ ճառագայթաակտիվ փորձանմուշներ ձեռք բերելու նպատակով:

70. 4-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն՝ տեղում տեսչական ստուգման անցկացման հաստատումից միևնույն 25 օր անց տեսչական թիմն իրավունք ունի անցկացնելու ցանկացած գործողություն եւ օգտագործելու ցանկացած մեթոդ՝ թվարկված 69-րդ կետի "ա"-ից "ե" ենթակետերում: 4-րդ հոդվածի 47-րդ կետի համաձայն՝ տեսչական թիմն իրավունք ունի իրականացնելու ցանկացած գործողություն կամ օգտագործելու 69-րդ կետի "ա"-ից "ե" ենթակետերում թվարկված ցանկացած տեխնիկական միջոց: Տեսչական թիմն իրականացնում է գայլիկոնով անցքի բացում միայն 4-րդ հոդվածի 48-րդ կետի համաձայն Գործադիր խորհրդի հավանությունը ստանալուց հետո: Եթե տեսչական թիմը, 4-րդ հոդվածի 49-րդ կետի համաձայն, հայցում է երկարաձգել տեսչական ստուգման տեսողությունը, նա պետք է իր հայցում մատնացուց ալի, թե 69-րդ կետում թվարկված որ գործողություններն ու միջոցներն է մտադիր իրականացնելու, որպեսզի ի վիճակի լինի իր մանդատն իրագործելու:

### Տեսչական ստուգման վայրի վրայով իրականացվող թռիչքներ

71. Տեսչական ստուգման թիմն իրավունք ունի անցկացնելու թռիչքներ տեսչական ստուգման վայրի վրայով՝ տեսչական ստուգման ընթացքում տեսչական թիմին տեսչական ստուգման վայրում ընդհանուր կողմնորոշմամբ ապահովելու, գետնի վրա անցկացվող տեսչական ստուգման վայրը նեղացնելու եւ օպտիմալացնելու եւ իրական փաստերի հավաքումը դյուրացնելու նպատակով՝ օգտագործելով 79-րդ կետում նշված սարքավորումը:

72. Թռիչքն իրականացվում է այնքան շուտ, ինչքան դա գործնականում հնարավոր է: Տեսչական ստուգման վայրի վրայով իրականացվող թռիչքի ընդհանուր տեսողությունը պետք է լինի ոչ ավել, քան 12 ժամ:

73. 79-րդ եւ 80-րդ կետերում նշված սարքավորման օգտագործմամբ լրացուցիչ թռիչքները կարող են իրականացվել տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության համաձայնությամբ:

74. Այս վայրը, որտեղ իրականացվելու են թռիչքները, չի տարածվում տեսչական ստուգման վայրից դուրս:

75. Տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունն իրավունք ունի

սահմանափակումներ պարտադրելու կամ, բացառիկ դեպքերում եւ հիմնավորված արդարացմամբ, արգելելու զգայուն տեղանքների վրայով եւ տեսչական ստուգման նպատակին չառնչվող թոհշըները: Սահմանափակումները կարող են վերաբերել թոհշը բարձրությանը, անցումների եւ շրջադարձների թվին, թոհշի տեսողությանը, օդանավի տիպին, օդանավում տեսուչների թվին եւ չափումների կամ դիտարկումների տիպին: Եթե տեսչական թիմը գտնում է, որ զգայուն տեղանքների վրայով իրականացվող թոհշըների նկատմամբ սահմանափակումներն ու արգելքները կարող են խափանել իր մանդատի իրագործումը, տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետությունը գործադրում է ամեն խելամիտ ջանք տեսչական ստուգմանն այլընտրանքային միջոցներ տրամադրելու համար:

76. Թոհշըներն իրականացվում են ըստ թոհշի ծրագրի, ընդունված կարգի համաձայն արձանագրված եւ հավանության արժանացած՝ տեսչական ստուգման ենթարկվող:

Մասնակից պետության ավիացիայի օրենքներին եւ կանոններին համապատասխան: Տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության թոհշի անվտանգության կանոնները խստորեն պահպանվում են թոհշի գործողությունների ողջ ընթացքում:

77. Թոհշըների ընթացքում վայրեշը, որպես կանոն, թույլատրվում է միայն տեղ հասելու դեպքում կամ վառելիք վերալցնելու նպատակներով:

78. Թոհշըներն իրականացվում են տեսչական թիմի կողմից հայցված այնպիսի բարձրությունների վրա եւ տեսանելիության այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են իրականացվելիք գործողությունների, ինչպես նաև տեսչական ստուգման ենթարկվող Մասնակից պետության՝ ավիացիայի եւ անվտանգության կանոններին եւ տեսչական ստուգման նպատակներին չառնչվող համապատասխան զգայուն

տեղեկությունները պաշտպանելու նրա իրավունքին: Թոհշըներն իրականացվում են մակերեւույթից առավելագույնը մինչեւ 1,500 մետր բարձրությամբ:

